

Խմբագրական

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԷԱԿԱՆ ԱԶԴԱԿ Է ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ

(Լրագրողներու Համահայկական 9-րդ Համաժողովին առիթով)



Լրագրութիւնը ես կ'ըմբռնեմ՝ իր առաքելութեան մէջ, որպէս ճշմարիտ, ազատ ու բարեխիղճ խօսք, որ հարազատ ցոյանքը ըլլայ իրականութեան եւ ուղենիշը ապագայի, խօսք որ ըլլայ արթնութեան եւ սթափութեան հրաւեր....Իսկ նման խօսքը հիմքերէն մէկն է պետականաշինութեան: Ի գուր չէ ըսուած՝ «Ի սկզբանէ Էր Բանն»...Արդարեւ, խօսքն է որ կը կառուցէ կամ կը քանդէ, կ'ազատագրէ կամ ինքնախաբեութեան կ'առաջնորդէ, կը լուսաբանէ կամ կը մոլորեցնէ, կը սթափեցնէ կամ կ'օրօրէ սուտով ու կեղծիքով, ձայն կու տայ ձայնագորկին, կամ կը կոծկէ իրականութիւնը... Խօսքը, այս պարագային՝ լրագրութիւնը կամ հրապարակագրութիւնը, պատասխանատու առաքելութիւնը ունի հանրային կարծիք ձեւաւորելու եւ զայն առաջնորդելու, այնպէս որ կարելի է գուցէ ըսել՝ որպիսին է այդ խօսքը, նոյնպիսին կ'ըլլայ հաւաքականութիւնը, նոյնպիսին կ'ըլլայ պետութիւնը...

Լրագրութիւնը չէ կոչուած երբեք գեղեցկախօսելու կամ հաճոյախօսելու, քննելու իշխանութեանց կամ շողոքորթելու զանոնք, դառնալու անոնց քարոզչական բեմը կամ խօսափողը: Հարց կարելի է տալ, թէ արդեօք ի՞նչ աշխարհ մը պիտի ունենայինք, ընդհանրապէս, եթէ չըլլար անկեղծ ու անաչառ քննադատը, բան մը բարեփոխելու ուղղութեամբ յանձնառու գրիչը, գրիչները, որոնք հոգեպէս տառապելով կը քննադատեն, սրբագրելու համար թիւրն ու թերին, արատաւոր երեւոյթները...ազդակ դառնալով հանրութեան զգօնութեան, կեանքի յառաջընթացին ու զարգացումին:

Այս տրամաբանութեամբ ալ, հայ զանգուածային լրատուամիջոցները պէտք է կարենան իրենց մատը դնել մեր արիւնող վերքերուն վրայ, պայթեցնելու համար պալարը, զանոնք դարմանելու առաջադրութեամբ, մատնանշելով հայ կեանքի մէջ վիստացող խոցելի երեւոյթները: Այնքան դիւրին է Էջեր լեցնել այս կամ այն հատուածի, այս կամ այն իշխանութեան քարոզչութիւնը ընելով, «լաւ մարդ» երեւնալ եւ որքան դժուար է մաքուր եւ հիմնաւորուած քննադատութեամբ ձգտիլ սխալներու կամ բացթողումներու դարմանումին եւ «գէշ» մարդ դառնալ...

Լրագրողներու յաջորդական համաժողովներուն, որոնք կայացան Հայաստանի Հանրապետութեան յետ-անկախացման տարիներուն, կանոնաւոր հերթականութեամբ, ցաւ է արձանագրել որ մեր մէջ շատ սակաւ էին այն լրագրողները կամ



հրապարակագիրները, որոնք բարձրաձայնեցին հայրենական կեանքի արատաւոր երեւոյթներէն ամէնէն ուշագրաւները, արտագաղթէն մինչեւ ընտրութեանց եղծանում, կաշառակերութենէն ու փտածութենէն մինչեւ մենաշնորհեալ դասակարգի մը կեղեքումներն ու չարաշահումները, արդարութեանց եւ մարդկային իրաւունքներու ոտնահարումները, օրէնքի ոչ-հաւասար եւ կամայական կիրարկումը, ընկերային սուր բեւեռացումը, հայերէնի աղճատումն ու օտարաբանութեանց ներխուժումը մեր լեզուէն ներս, մշակութային կեանքի ապամշակութեացումը....Երեւոյթներ՝ որոնք հետզհետէ կուտակուելով, յանկարծօրէն պայթեցան հայրենի ժողովուրդին բուռն ըմբոստութեամբ դեռ շուրջ ամիս մը առաջ... Եւ յանգեցան նոր Հայաստանի մը ստեղծումին, ուր դարձեալ եւ ընդմիշտ՝ առողջ քննադատութիւնը, «օղի, ջուրի, հացի նման» կենսական է մեր պետութիւնը դնելու տեւական յառաջընթացի ճանապարհին վրայ, քանզի պետականաշինութիւնը, ըստ իս, մշտական ու յարատեւ ընթացք է...

Նոյնն է պարագան սփիւռքահայ կեանքին, ուր մամուլը պարտի սրտացաւօրէն քննադատել հայոց լեզուի նահանջը, հայ ինքնութեան խամրումը, հայ վարժարաններու փակումը կամ տեղատուութիւնը, հատուածական մտածողութեան ախտը, քարացած ու կոշկոռ կապած կարծրատիպերը մտածելակերպի եւ գործելակերպի, ծովման եւ օտարացման զառիթափը, լուծումներ առաջարկել հոն ուր կարելի է... Եւ միշտ առկայծ պահել հայկականութեան, ազգային ոգիի ջահը...

21-րդ դարուն, յատկապէս, երբ ժողովրդավարութեան մասին կը բարբառինք բոլորս, հաշուետուութիւն կը պահանջուի իւրաքանչիւր ղեկավարէ ու պատասխանատու պաշտօնատարէ, եւ հոս մամուլը անչափ կարեւոր դերակատարութիւնը ունի բացայայտելու տուեալ ենթակային պաշտօնավարման հետ կապուած էական հարցերը, զանոնք քննարկման առարկայ դարձնելու, զանոնք թափանցիկ ընծայելու առաջադրութեամբ...: Առանց թափանցիկ գործելակերպի հնարաւորութեան եւ պատասխանատուութեան, սխալները շերտ-շերտ կը կուտակուին եւ կը քողածածկուին շատ յաճախ, տուն տալով ապականութեան, լճացման եւ ճահճացման՝ հաւաքական գործունեութեան բոլոր ոլորտներէն ներս:

Հոս է որ հայ կեանքը կը կաղայ, քանզի ան կը խորշի բաց քննարկումէ, առողջ քննադատութենէ եւ ինքնաքննադատութենէ, որոնք բանալին են սխալներու սրբագրման եւ աւելի առողջ հաւաքականութեան կամ պետականութեան կայացման:

Ազատ, անկաշկանդ եւ պատասխանատու մամուլին դերակատարութիւնը անփոխարինելի է: Մամուլ՝ որ չծառայէ այս կամ այն իշխանաւորին կամ ղեկավարին, այս կամ այն հատուածին ու կուսակցութեան: Մամուլ՝ որ ըլլայ հարազատ տրոփիւնը ժողովուրդի բազկերակին:



Ազատ մամուլը՝ մէկ խօսքով, ժողովուրդին խիղճն է ու գիտակցութիւնը, անոր արթուն պահակը, որուն կը մնան հաշուետու ամէն տեսակի իշխանութիւններն ու ղեկավարները՝ քաղաքակիրթ աշխարհին մէջ, եւ հայ կեանքին մէջ ի մասնաւորի:

Հայ մամուլը կամ զանգուածային լրատուամիջոցները պետք է կարենան իրենց լուսարձակը սեւեռել ամբողջ հայ կեանքին վրայ՝ Հայաստանի թէ սփիւռքի կամ սփիւռքներու կարեւոր խնդիրներուն, եթէ կ'ուզենք մէկ ազգի, մէկ հայրենիքի պատկանելիութեան գաղափարը կազմաւորել ու ամրապնդել, եթէ կ'ուզենք որ հայ պետականութիւնը դառնայ ուշադրութեան սեւեռակէտը համայն հայութեան, եթէ պետականաշինութիւնը, իրաւական պետութեան եւ քաղաքացիական առողջ հասարակութեան կազմաւորման խնդիրները պիտի դառնան ամբողջ հայութեան յանձնառութիւնը: Քանզի՝ եթէ սփիւռքի մէջ հայ դպրոց մը փակէ իր դռները, կենսատու երակ մըն է որ կը կտրուի համայն հայութեան մարմնէն...Եթէ Հայաստանի մէջ, որեւէ բռնութիւն բանեցուի հայրենի ժողովուրդին վրայ, ամբողջ ազգի մը արժանապատուութիւնն է որ կը ոտնահարուի, եթէ լրագրողը խոշտանգուի կամ պատժուի իր ազատ միտքերուն համար, ազատ խօսքն ու միտքն են որ կը բռնադատուին ու կը ցեխարձակուին համայն հայ կեանքին մէջ....: Եթէ Հայաստանի Հանրապետութենէն արտագաղթը թափ առնէ, հայութեան մարմինն է որ կ'ըլլայ արիւննաքամ: Հայ կեանքը մէկ է ու միասնական եւ Հայաստան-Արցախ-Սփիւռք կը կազմեն մէկ ամբողջութեան մը մասնիկները: Իսկ՝ դրական շեշտով մը, երբ հայրենի համայն ժողովուրդը ոտքի կ'ելլէ եւ քայլ կ'առնէ յանուն իր իրաւունքներուն, իր ազատ եւ արդար կեանքի հաստատումին, հոն համայն ազգն է որ իր դրական ներուժով, իր հոգեւոր-բարոյական մասնակցութիւնը կը բերէ սրբազան ըմբոստութեան յորձանքին, համազգային տեսլականով կենսաւորուած, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ քանի մը շաբաթներ առաջ եւ որուն լիարժէք արձագանգեց հայ մամուլը ամենուր՝ ազատ, արդար, արժանապատիւ պետութեան կայացման մէջ տեսնելով հայ ժողովուրդի շէնշող ապագան, մեր բոլորին երազած հայրենիքը:

Նման մամուլն ու խօսքը կը դառնայ ճշմարտութեան բանալի, իրաւ պետականաշինութեան ուղեցոյց, ազատագրելով հայ անհատն ու հաւաքականութիւնը սուտի, կեղծիքի ճիրաններէն..., քարոզչութեան եւ հակաքարոզչութեան մոլորեցնող ախտերէն, հայութիւնը տարանջատող միտումներէն..., քանզի միայն ճշմարտութիւնն է որ կ'ազատագրէ ազգն ու պետութիւնը, միաժամանակ բարձր պահելով հայ կեանքի բարոյական, հոգեմտաւոր արժէքներու համակարգը:

Հայ լրագրութիւնը կամ հրապարակագրութիւնը պարտի նորոգ գիտակցութեամբ եւ պատիասխանատուութեամբ վերստանձնել իր իսկական կոչումը եւ համազգային առաքելութիւնը, եթէ յանձնառու ենք ունենալու ազատ, արդար, զարգացող եւ յառաջադէմ երկիր ու ժողովուրդ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՖԱՄԱԿՈՒՍԹԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԾ «ԿԱՆՉՈՒՈՐ» ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Մշակույթն է որ ինքնուրոյն դիմագիծ կու տայ որեւէ ազգային հաւաքականութեան, կը բնորոշէ անոր տեղն ու դերը մարդկային քաղաքակրթութեան խճանկարին մէջ, միաժամանակ հարստացնելով այդ խճանկարի բազմազոյն, բազմերանգ պատկերը: Մեր ժողովուրդը՝ իր հայրենիքին մէջ եւ անոր սահմաններէն դուրս ալ, ամենուր իր ինքնութեան կնիքն է թողած, հոն ուր հանգրուաներ է պատմական իրադարձութեանց բերումով:

Այդ ինքնութեան վսեմագոյն արտայայտութիւններէն են իր ճարտարապետական կոթողները, ուր կարծէք քարը՝ լեզու առած, կը պատմէ հայուն սերն ու հաւատքը, անոր աշխարհընկալումը, անոր գեղագիտական ճաշակը...

Կիպրոսի շքեղագոյն քաղաքներէն է, անկասկած, Ֆամակուսթան, որ ներկայիս կը մնայ բռնազրաւուած թրքական բանակին կողմէ՝ 1974-էն ի վեր: Անիկա ճանչցուած է որպէս ոչ միայն ծովափնեայ գեղեցիկ քաղաք, այլեւ որպէս հնամեայ, պատմական արժէք ներկայացնող քաղաք իր 365 եկեղեցիներով:

Հոն է որ վերանորոգման աշխատանքներ կատարուեցան վերջերս՝ Եւրոպական Միութեան պատկան Մարմինն եւ Միագեալ Ազգերու UNDP-ի ջանքերով, գործակցաբար՝ Մշակութային Պահպանման յատուկ Յանձնախումբին՝ The Technical Committee on Cultural Heritage-ին: Վերանորոգման աշխատանքները ընդգրկեցին մասնաւորապէս Ֆամակուսթայի 14-րդ դարէն մնացած, Հայկական «Կանչուոր» Ս. Աստուածածին եւ անոր կից գտնուող Լատինական Ս. Աստուածածին եկեղեցիները:

Վերանորոգման աշխատանքներու ամբողջացման առիթով, յատուկ արարողութիւն մը տեղի ունեցաւ Շաբաթ, 26 Մայիս 2018-ին, կ.ե. ժամը 6:30-ին, կազմակերպութեամբ վերոնշեալ մարմիններուն: Յատուկ հանրակառքեր տրամադրուեցան փափաքողները փոխադրելու արարողութեան վայրը՝ վերանորոգուած զոյգ եկեղեցիներու շրջափակին վրայ: Շուրջ 100 հոգի մասնակից եղան, որոնց մէջ՝ Պետ. Ներկ. Պրն. Վարդգէս Մահտեսեան, Տէր Սոմիկ քնյ. Հապէշեան, Թեմական եւ Վարչական Մարմիններու ներկայացուցիչներ եւ հիւրեր:



Գեղարուեստական ճոխ յայտագիր մը գործադրուեցաւ, ուր յատկապէս տպաւորիչ էր «Ավէ Մարիա»-ի երգեցողութիւնը՝ մայրամուտի վերջին շողերու մարմող ցոլերուն տակ, ինչպէս նաեւ՝ Կոմիտասի «Հայ Նարահայ» երգի կատարումը, որոնք պահը ընծայեցին անչափ յուզախոռով եւ ոգեշունչ...

Խօսք առին վերանորոգման աշխատանքները նախաձեռնող եւ իրականացնող Մարմիններու ներկայացուցիչները, շեշտելով մասնաւորաբար՝ մշակութային ժառանգութեանց պահպանումին անհրաժեշտութիւնը, որպէս ժողովուրդներու մերձեցման լաւագոյն միջոց, որպէս քաղաքակրթութեան արժէք եւ համամարդկային գանձ...Եւ յոյս յայտնեցին որ վերանորոգուած կոթողները կրնան ազդակ դառնալ ներհամայնքային բարեկամական, գործակցութեան մթնոլորտի մը կայացման, ինչպէս նաեւ՝ միացեալ Կիպրոսի մը վերակերտումին:

Խօսք առաւ հայ համայնքին եւ Կիպրոսի Թեմին անունով՝ Նիկոսիոյ հոգեւոր հովիւ, Տէր Մովսիկ քահանայ Հապէշեան, որ յատկապէս արձանագրեց անգլերէն լեզուով «Եթէ կ'ուզես ազգ մը սպաննել, պիտի սպաննես անոր մշակոյթը, քանզի մշակոյթը ազգի մը արմատն է», ինքնութիւնը, եւ յաւելեց որ մշակութային կոթողի մը վերանորոգումը հիասքանչ եւ գովելի աշխատանք է, քանզի աշխարհը հարուստ է իր մշակութային այլազանութեամբ: Ապա ան երախտագիտութիւն ու շնորհակալութիւն յայտնեց պատկան մարմիններուն Կանչուորի Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերանորոգման ծրագրի իրականացման համար յատկապէս, յանուն հայ համայնքին, յանուն հայ եկեղեցւոյ, յանուն Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Խորէն Արք. Տողրամաճեանին:

Ներկաներս շրջեցանք հնաբոյր եկեղեցւոյ կամարներուն տակ, ուր մնացած են երբեմնի հարուստ որմանակարներուն շատ աղօտ ուրուագիծը միայն, որ դեռ հիացում կը պատճառէ դիտողին...Եւ հուսկ միասնաբար երգեցինք Տէրունական աղօթքը, առաջնորդութեամբ Տէր Մովսիկ քահանային, յուզական ջերմ ապրումներով թաթաւուն: Արդարեւ, տասնամեակներէ ի վեր, գուցէ առաջին անգամն էր որ հայերէն աղօթք կը լսուէր այդ հնաւանդ եկեղեցիին կամարներուն տակ...

Անմոռանալի օր մը՝ արդարեւ, կիպրահայ կեանքի տարեգրութեան մէջ, որ դեռ երկար պիտի ապրի մեր յիշողութեան մէջ:


ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

ARMENIAN BANKERS In the Ottoman Empire

(Հայ Սեղանաւորներ Օսմանեան Կայսրութեան մէջ) ԳՐԶԻՆ



Սոյն գիրքի յառաջաբանին մէջ, «Ինչո՞ւ այս գրքոյկը» գլուխին տակ, հեղինակը՝ Մկրտիչ Յակոբ Պուլտուքեան, յատկանշականօրէն կը գրէ. « Զարկաւոր է որ հայ նոր սերունդը խոր գիտակցութեամբ ուսումնասիրէ թէ ինչպէս հայուն դարերու ընթացքին կուտակած դրամագլուխը յափշտակուեցաւ, իւրացուեցաւ 1915-1923-ի Օսմանեան կայսրութեան վերջաւորութեան ու Ցեղասպանութեամբ, ազգի մը կողմէ որ այսօր կ'ուրանայ իր գործած անմարդկային արարքը» եւ կու տայ սպառիչ տեղեկութիւններ «խոջայական կապիտալ»ի, չելեպիներու եւ ամիրաներու մասին, որոնք դարձան նախահայրերը պոլսահայութեան, որոնք զոի դարձան թուրքին գործադրած Ցեղասպանութեան եւ որոնց հսկայական դրամագլուխը առգրաւուեցաւ թրքական իշխանութեանց կողմէ:

Երկուշաբթի 11 Յունիս 2018-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Կիպրոսի դրամատան մշակութային հիմնարկի սրահին մէջ, տեղի ունեցաւ՝ Մկրտիչ Յակոբ Պուլտուքեանի հեղինակած՝ Armenian Bankers in the Ottoman empire արժէքաւոր գիրքի շնորհահանդեսը ի ներկայութեան ուսումնասէր ընտրանի հանրութեան մը, կազմակերպութեամբ Նիկոսիոյ «Մուֆլին» գրատան: Գիրքը հրատարակուած է Պէյրութի մէջ, 2017-ին:

Գիրքի ներսի կողքին վրայ գրուած ձօնը պերճախօս է. «Այս գիրքը կը ձօնեմ իմ նախահայրերու՝ աշխարհատարած Պուլտուխեանց, Ուրֆալեան, Չատրիկեան, Գույումճեան, Շատարեւեան, Ունճեան, Պոյաճեան, Լուսարարեան, Եղիայեան, Մէյմարեան, Զեհեայեան, Պազալեան, Առաքելեան, Սեֆերեան եւ Սերոբեան ընտանիքներուն, որոնք ժամանակին կ'ապրէին՝ Կիլիկիոյ Ռուբինեան Թագաւորութեան բարձրաւանդակի ամրոցներուն մէջ, որպէս ինքնուրոյն ցեղ մը՝ զօրավիգ եւ պաշտպան պետական հողատարածքներու: Անոնք բարերարներն էին՝ Կիլիկիոյ Սոյ սուրբ քաղաքի Զայ Առաքելական եկեղեցւոյ Կաթողիկոսութեան, նուիրելով Ս. Սոֆիա տաճարի կաթողիկոսանիստ գահը 1790 թուականին, որ հետագային կազմաքանդուեցաւ, կործանուեցաւ եւ կողոպտուեցաւ օսմանեան թուրքերու ձեռամբ, 1915-ին: Թող անոնց հոգիները ննջեն խաղաղութեամբ»:



Բացման եւ բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ «Alkiotis»-ի Հիմնարկի փոխ նախագահուհի, Օրդ. Թաթեանա Տէր Աւետիսեան, որ հմտօրէն վարեց երեկոն, յաջորդաբար բեմ հրաւիրելով օրուան երեք բանախօսները:

Առաջին բանախօսն էր Կիպրոսի Դրամատան Մշակութային Հիմնարկի նախագահ Դոկտ. Սիմէոն Մաթցիս, որ ներկայացուց նշեալ գիրքի հեղինակ, Մկրտիչ Յակոբ Պուլտուքեանը:

Արդարեւ, Մկրտիչ Յակոբ Պուլտուքեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Աւարտելէ ետք Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանը՝ 1957-ին, հետեւած է Պէյրութի Ամերիկեան համալսարանի առեւտրական վարչագիտական ու տնտեսագիտական ճիւղերուն ու վկայուած 1964-ին՝ Մագիստրոս վարչագիտութեան վկայականով (MBA): Պէյրութի Հայկազեան Գոլէճին մէջ 1969-ին հիմնած է առեւտրական ու տնտեսագիտական բաժանմունքը ու եղած է անոր առաջին ատենապետը: Դասաւանդած է նաեւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի վարչագիտական կաճառը: Դրամատնային գործի ասպարէզը սկսած է 1961-ին, նախ Bank of America-ի մէջ, ապա Chemical Bank-ի եւ Banque Libano-Francaise-ի մէջ: 1985-ին, նշանակուած է Լիբանանի Կեդրոնական Դրամատան փոխկառավարիչ եւ պետութիւնը ներկայացուցած է տարբեր գիտաժողովներուն: 1992-93 տարիներուն, գործակցած է Եւրոմիութեան արտաքին յարաբերութիւններու գրասենեակին հետ՝ Պրիւքսել, իբրեւ խորհրդատու-փորձագետ՝ նախկին Խորհրդային Միութեան վեց հանրապետութիւններու մէջ: Հեղինակ է բազմաթիւ գիրքերու, ուսումնասիրութիւններու, մասնագիտական հատորներու:

Երկրորդ բանախօսն էր Կիպրոսի Համալսարանի դասախօս Դոկտ. Թոմաս Ալեքսանտըր-Սիւքլէր, որ ընդհանուր գիծերու մէջ եւ՝ համապատասխան քարտէսներով եւ պատմական լուսանկարներով, ներկայացուց Մեծն Հայաստանի Բարձրաւանդակի եւ Կիլիկիոյ, ինչպէս նաեւ սփիւռքահայ գաղութներու մէջ ծաւալուած հայ առեւտրական գործառնութիւնները, ինչպէս մասնաւորապէս «Քայսերի»ի, կամ Կեսարիոյ, Էրզրումի, Վանի, Իսթանպուլի մէջ, մինչեւ Ամսթերտամ, Եգիպտոս, Պարսկաստան, Հնդկաստան եւ այլուր..., ողջունելով միաժամանակ Պրն. Պուլտուքեանի հեղինակած արժեքաւոր գիրքի ուսումնասիրութիւնները, մանաւանդ այնտեղ տեղ գտած՝ բոլոր ամիրաներու, լումայափոխներու եւ սեղանաւորներու ցուցակը, որոնք ի վերջոյ մահուան դատապարտուէր Էին թրքական իշխանութեանց կողմէ առ ի գնահատանք իրենց երկրին մատուցած ծառայութեանց...

Ի վերջոյ, բեմ հրաւիրուեցաւ հեղինակը՝ Պրն. Մկրտիչ Յակոբ Պուլտուքեան, որ հակիրճ ներկայացուց իր գիրքի բովանդակութիւնը, գլուխ առ գլուխ նշելով իւրաքանչիւրին խորագիրը, որ անչափ կարեւոր տեղեկութիւններ կը պարունակէ ինչ կը վերաբերի հայկական ֆինանսին եւ ֆինանսականներու ունեցած էական, գլխաւոր տեղին ու դերակատարութեան օսմանեան կայսրութեան մէջ....: Հայերուս համար ի մասնաւորի , անդարմանելի մեր կորուստներուն անբաժանելի մասը կը կազմէ, անտարակոյս, հայկական կապիտալի կորուստը, որուն մասին այնքան քիչ կ'անդրադառնանք, ինչպէս ըսուած է գիրքին մէջ...: Մենք կորսնցուցինք այդ վիթխարի հայկական կապիտալը կամ դրամագլուխը եւ զայն յանձանձող եւ շրջանառութեան մէջ դնող խոճաները, չեւեպիներն ու ամիրաները, որոնք դարձան Յեղասպանութեան զոհերը, իսկ այդ դրամագլուխը առգրաւուեցաւ թրքական իշխանութեանց կողմէ:



Ան նշեց որ գիրքը կը պարունակէ յաւելուածական բաժին մը՝ սփիւռքի մէջ գործող անուանի հայ սեղանաւորներու, ինչպէս նաեւ՝ հայ առեւտրական ձեռնարկութեանց 15-րդ դարէն մինչեւ 1915 թուականը, հայ ձեռնարկատէրերու, ամիրաներու, լուսայափոխներու, որոնք արխիւային նշանակութիւն ունին որոշապէս:

Ջերմօրէն ողջունելի եւ շնորհաւորելի է Պրն. Սկրտիչ Յակոբ Պուլտուքեանը՝ իր այս կարեւոր աշխատասիրութեան համար, որ մեր ժողովուրդի պատմութեան մէկ կարեւոր երեսը լոյսին կ'ընծայէ ի տես եւ ի լուսաբանութիւն հայ նոր սերունդին եւ համայն աշխարհին, եւ կարեւոր ներդրում մըն է հայ Դատի պահանջատիրութեան գծով մեր ունեցած փաստաթուղթերուն ամբողջութեան:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

Վարդան Պետրոսեան. «Հայ մարդն իր մէջ որոշում է կայացրել՝ այլեւս չապրել գաղջի մէջ»

Զարուհի Մեջլումեան



Դերասան Վարդան Պետրոսեանը երկու օր առաջ (Մայիս ամսուան սկիզբը՝ Խմբ.) է վերադարձել Հայաստան: «Հետքին» տուած հարցազրոյցում նա պատմեց, որ Հայաստան այցելութիւնը ծրագրած չի եղել: Գալու նպատակը համաժողովրդական շարժումը տեսնել, զգալն է ֆիզիկապէս և, իհարկէ, լինել երիտասարդների կողքին:

-Վարդան, երկու օր է Երեւանում եք, բնական է՝ հետեւել էք շարժմանը սփիւռքից: Ի՞նչ էք զգացել, տեսել, արձանագրել:

-Ճիշտ է, որ առաջին օրուանից հետեւել եմ շարժմանը: Եւ ես մենակ չեմ: Սփիւռքում մարդիկ առաւօտից երեկոյ ինտերնետով հետեւում են Հայաստանի իրադարձութիւններին: Բոլորը հոգով, սրտով, ամբողջ Էութեամբ մեր ժողովրդի հետ են: Շատ-շատերը այս պահին կ'ուզենան ներկայ լինել Հայաստանում: Բայց շատերը չունեն այդ հնարաւորութիւնը: Ես կարողացայ գալ, որովհետեւ դրսում լինելն արդէն դառնում էր անտանելի: Ուզեցի ֆիզիկապէս ներկայ լինել: Կան պրոցեսներ, երբ հեռւում լինելը շատ դժուար է: Նաև ինձ անհանգստացնող երեւոյթներ կային, դա էր պատճառը, որ ուզեցի անպայման ներկայ գտնուել, բայց ոչ միայն ֆիզիկապէս ներկայ լինել, այլեւ ապրել այս պահերը:

-Գալով Երեւան, դուրս գալով փողոց, հրապարակ՝ ի՞նչ փոփոխութիւն տեսաք մարդկանց մէջ:

-Առաջին փոփոխութիւնը՝ շարժումը առաջ են տանում երիտասարդները, շարժման ղեկը երիտասարդների ձեռքին է: Սա ամենակարեւորն է, ամենայուզիչն ու ամենաողջունելին: Երիտասարդները չեն ուզում ապրել այնպէս, ինչպէս ապրում էին առաջ: Ուղղակի պետք է կանգնել նրանց կողքին: Մեր սերունդն ինչ արեց-արեց՝ լաւ արեց, վատ արեց, արդէն նշանակութիւն չունի: Բայց այսօր երիտասարդները գնում են առաջ, նրանք այլ կերպ են ուզում ապրել, այլ կերպ են տեսնում կեանքը:

Ես երբեք մտել եմ մի պետութիւն, որը նման չէր նախկինում տեսածս Հայաստանին: Տեսեք՝ ինչքան ուրախութիւն կայ, ինչքան ժպիտ, ինչքան համարձակութիւն: Երբ ամեն անգամ գալիս էի Հայաստան, զգում էի, որ մարդկանց մէջ ինչ-որ ճնշուածութիւն կար, վախ կար: Հարցեր էին տալիս՝ բա՛, Վարդան ջան, ինչ ա լինելու, դու ոնց ես տեսնում ելքը, ես վիճակը ինչքան կը շարունակուի: Ինչքան կարողանում էի, գօտեպնդում էի մարդկանց



Ներկայացումներովս, մարդկանց հետ առանձին խօսակցութիւնների ժամանակ: Բայց այսօր այն, ինչ տեսայ, շատ-շատ կարելի է: Մարդիկ ձերբագատուել են վախից, իրենք իրենց վախերն են յաղթահարել, դարձել են ուրիշ մարդ, ճիշտ մարդ:

Բոլորը հասկանում են, որ դժուարութիւններ կան ու դեռ առջեւում են, բայց կայ պետութիւն կառուցելու գիտակցումը: Անդառնալի դրական, լաւ, լուսաւոր երեւոյթներ են տեղի ունեցել: Վերջնականապէս հայ մարդն իր մէջ որոշում է կայացրել՝ ես այլեւս չեմ կարող գաղջի մէջ ապրել: Եւ սա որոշ քաղաքական ուժեր, եթէ կարելի է նրանց այդպէս անուանել, պետք է վերջապէս հասկանան: Արդէն դեմագոգիայի ժամանակը չէ, էլ ոչ մէկի դրանով չես խաբի: Սա այլեւս իրենց իմացած ժողովուրդը չէ:

Մեծահասակներին՝ տատիկ-պապիկ, ծնողներ... բոլորին եմ տեսնում, բայց պիտի երիտասարդների կողքին կանգնի նաեւ մտաւորականը: Պիտի միասնական լինենք, հոգեւորականներ թող լինեն, օրինեն շարժումը:

-Ձեր կարծիքով ի՞նչը մարդկանց դուրս բերեց փողոց՝ պայքարելու:

-Ներքին սպասումների, քնած հարբուխի ժայթքում էր սա: Օդից նման շարժում չէր կարող ծնուել: Ժողովուրդը էլ չէր դիմանում: Կրիտիկական վիճակում էր Հայաստանը: Անարդարութիւնը դարձել էր կենսակերպ, բանը բանից անցել էր: Երկրից գնում էին անգամ մարդիկ, ովքեր հարուստ են, նոյնիսկ ճնշուած չեն, ինչ-որ չափով առնչւում են մի քանի կլանների: Սակայն երկրում սողեծուել էր ճահճացած վիճակ, այդպիսի բորբոսնած ճահճում ինչ-որ բան պիտի տեղի ունենար: Ու ամէն ինչ սկսուեց Գիւմրիից Նիկոլ Փաշինեանի քայլերով:

-Անարդարութեան մասին խօսեցիք: Դատաիրաւական համակարգում ինչպիսի՞ փոփոխութիւնների կարիք կայ:

- Մշակոյթ, կրթութիւն, արդարադատութիւն, որեւէ համակարգ չկայ, որ պղծուած չլինի: Բակտերիաներն ամէն ինչ քայքայել են: Բայց եթէ գնանք վրեժխնդրութեան ճանապարհով, երկիրը չի վերականգնուի: Պիտի ամէն ինչ տանել օրինականութեան դաշտ:

Իսկ դատաիրաւական համակարգի հետ շփման փորձ ունեցել եմ: Ես տեսել եմ՝ ինչ է կատարւում բանտերում, դատարաններում: Անպայման պիտի վերափոխուի այդ ամէնը: Կալանքից դուրս գալուց յետոյ իմ նոր ներկայացման մէջ խօսում եմ հենց դատաիրաւական համակարգի խնդիրների մասին բաւականին մանրամասն: Այդ համակարգը ամէն ինչից հարստանում էր: Հարստացման աղբիւրներից մէկն էլ հենց կալանաւորն էր: Գիտե՞ք՝ ինչքան անարդար դատապարտուած մարդիկ կան մեր բանտերում: Իհարկէ, չեմ կարող տոկոս ասել, բայց կէսից շատը անմեղ-մեղաւորներ են: Երբ մարդուն տօնածառ դնելու համար 6 տարի ազատազրկում են, 10.000 դրամի համար՝ 5 տարի:

- Նիկոլ Փաշինեանի պնդումները օրինականութեան, օրենքի առաջ բոլորի հաւասարութեան հաստատման մասին լուրջ հակազդեցութիւն են ծնում վարչախմբի մօտ: Ինչո՞ւ է այդպէս:

- Առաւօտեան Ֆրանսիայի «Լիբերասիոն» թերթը գրել է՝ 55 բանդիտ 3 մլն ժողովրդի դէմ: Հասկանո՞ւմ էք՝ ինչպէս են վերնագրւում միջազգային մամուլում մեր իրադարձութիւնները: Բայց ինձ շատ դուր է գալիս այն փաստը, որ շարժման առաջնորդը չի խօսում վեներետայի



մասին: Դա բացառուած բան է: Եթէ մեր երկիրը գնայ վրեժխնդրութեան ճանապարհով, ինչպէս միշտ արուել է միւս յեղափոխութիւններից յետոյ, կը սխալուի: Բոլորը պիտի լուծուի օրէնքի ու օրինականութեան դաշտում: Անգամ այն մարդիկ, ովքեր ինչ-ինչ զարտուղի ճանապարհներով հարստացել են, որովհետեւ, գիտեք՝ այսօր դժուար է Հայաստանում արդար բիզնեսով հարստանալ, նրանցից շատերը ուրախ կը լինեն աշխատել օրինականութեան դաշտում, որովհետեւ բիզնեսմէնը պիտի հանգիստ աշխատի: Նա հարստանում ու հարստացնում է երկիրը, ոչ թէ ինչ-որ կլանի:

Երեկ նայում էի ԱԺ-ում հանրապետականների ելոյթները, յանկարծ նրանք սկսել էին Սահմանադրութիւնից խօսել՝ տարիներ շարունակ ոտնահարելով Սահմանադրութիւնը: Տասնեակ տարիներ իշխում էր ոչ թէ օրինախախտումը, այլ բեսարեղելը, որի հեղինակներն ու ի կատար ածողները յանկարծ երեկ խօսում էին Սահմանադրութիւնից: Բեսարեղելի կուսակցութիւնը ինչպէս է խօսում օրինականութեան մասին: Նրանք վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինեանի հարցեր էին տալիս՝ եթէ արեգակի խաւարումներ լինեն, մոլորակը չպտըտուի, ապագայ վարչապետը պատրա՞ստ է դրան: Պարզւում է՝ այս տարիներին մենք ունեցել ենք վարչապետներ, ովքեր տիեզերական հարցերով են զբաղուել, երկրի ձգողականութեան ուժն են ապահովել ժողովրդի համար, արեւի ճառագայթներն են երեւի հասցրել մեր երկիր: Հո նրանք չէին կարող կաշառակերութեամբ զբաղուել: Դառն ծիծաղ էր առաջացնում այս ամէնը: Նրանք, ովքեր ԱԺ-ում երեկ ելոյթ էին ունենում, հարցեր տալիս Նիկոլ Փաշինեանին, պետք է հասկանան՝ իրենց գնացքն արդէն գնացել է: Ժողովուրդը միասնական է:

-Ի՞նչն է Ձեզ հիմա ոգեւորում, յուսադրում շարժման մէջ:

-Ես շատ ուրախ եմ, որ սա Հայաստանի թռիչքային զարգացման մեծ հնարաւորութիւն է բացելու: Հայաստանը իսկապէս կարող է դառնալ հզօր պետութիւն: Եւ ինչպէս հիմա ժողովուրդը քայլ առ քայլ առաջ է գնում, այդպէս էլ քայլ առ քայլ հասնելու է իր յաղթանակին:

Հենց երեկ տեսել եմ ցնծացող մարդկանց, բայց ոչ մէկը այդ ցնծութեան, ուրախութեան մէջ չի կորցնում հաւասարակշռուածութիւնը, ինքնակազմակերպուածութիւնը:

- Զրոյցի սկզբում ասացիք՝ անհանգստացնող երեւոյթներ էք նկատել:

- Իհարկէ, անհանգստացնող երեւոյթներ կան: Երեկ էլ նայեցի ԱԺ նիստը: Ես չգիտեմ ինչպիսի ընթացք կարող է վաղը ստանալ շարժումը: Բնականաբար, այն իր ընթացքն ունի, բայց այն մարդիկ, որոնք այնուամենայնիւ ուզում են ճնշել այս շարժումը, ինչ քայլերի պիտի դիմեն: Ուստի, պետք է լինենք զգօն, աչալուրջ: Յատկապէս կոչ եմ անում մտաւորականներին, յայտնի մարդկանց: Այսօր նրանք պետք է կանգնեն ժողովրդի, երիտասարդի կողքին:

Եթէ ոմանք ուզում են ճնշել այս զարթօնքը, պետք է հասկանան, որ այս ինքնակազմակերպուած, լուսաւոր, ստեղծագործ երիտասարդներին այլեւս չեն կարող ճնշել: Եթէ փորձեն, նրանք անմիջապէս ստեղծագործելու են: Ստեղծագործող մարդուն ոչինչ չես կարող անել: Ինչքան դիմացը արգելքներ, պատնէշներ դնես, նա անպայման ստեղծագործելու է, առաջ է գնալու, քանի որ ստեղծագործողը ներքին հաւատամք ունի: Նրա գէնքն առաքինութիւնն է:



Այսօր մենք յաղթող երիտասարդութիւն ունենք: Եւ ես համոզուած եմ՝ այս շարժումը ոչ մէկը չի կարող ջարդել: Իսկ եթէ որեւէ մէկի մտքով անցնում է, որ կարող է դրսից ուժ բերել, թող չփորձի: Որեւէ մէկին այլեւս չեն կարող ուժով վախեցնել: Մարտի 1-ն այլեւս չի կրկնուելու: Հանրապետականները թող դուրս գան փողոց նայեն մարդկանց աչքերին: Չնայած մտածում եմ՝ ինչ երեսով են դուրս գալու: Վախենում են, որ իրենց կը քաշքշէ՞ն. ոչ մի նման բան, ուղղակի իրենք արդէն դուրս մնացած կը լինեն այս ամէն ինչից: Անգամ հիմա ընտրութեան հնարաւորութիւն ունեն՝ կանել հարազատ մարմին, հարազատ ժողովրդին: Բայց ինչքան օտարացած են ժողովրդից: Լա՛ւ, մտածում եմ՝ եղբայրներ ունեն, ծանօթ-բարեկամներ, լրտեսներ ունեն վերջիվերջոյ: Մի՞թէ չեն փոխանցում իրենց, թէ ինչ են մտածում, զգում, ապրում մարդիկ:

-Դասագրքերից իմացած յեղափոխութիւններին նմա՞ն է հայկական այս թաւշեայ յեղափոխութիւնը:

-Ոչ մի յեղափոխական շարժում մարդասիրութեան, առաքինոեան զէնք չի ունեցել: Յեղափոխութիւնները, որպէս կանոն, ատելութիւնն են օգտագործել որպէս զէնք: Մեզ մօտ էլ միշտ այդպէս է եղել՝ անկիւնները սրել, ամէն ինչ բաժանել սեւի ու սպիտակի: Բայց հիմա՝ ինչ զարմանալի հասունութիւն, ինչ զարմանալի քնքշութիւն այս եղբայրութեան մէջ: Սա հրաշալի պահ է:

ԱՂԲԻՒՐ՝ ՀԵՏՔ

Յօդուածներ

ՇՆՈՐՀԱՒՈՐ՝ ՀԱՅՈՒԹԵԱՆ, ՓՈՒԼՆ ԱՌԱՋԻՆ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ...



Մօտ քառորդ դար արմատակալած ՕԼԻԿԱՐԽԻԱՆ՝ կամովին եւ հեշտօրէն, պիտի չգիշի իր դիրքերը թէեւ՝ բայց մենք կը շնորհաւորենք Հայ ժողովուրդը, գէթ Առաջին Փուլը՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ:

Արեւելահայաստանի օլիգարխիական համակարգի իշխանաւորներու պարագլուխ՝ Սերժ Սարգսեանը չիրաժարեցաւ կամովին, այլ՝ հրաժարեցուեցաւ հակառակ իր կամքին, քանի որ ան, ձեւականօրէն եւ ժամանակաւորապէս հրաժարելէն միայն երկու օր

առաջ, սպառնացած էր՝ «Նոր Մարտ Մէկ»ով մը...: Ուրեմն, ան հրաժարեցուեցաւ հզօր ճնշումին տակ՝ տասնեակ հազարներով ցոյցի իջած քաղաքացիներուն, եւ... հաւանաբար ալ՝ հարկադրանքին տակը, Փութինի յորդորին... Որովհետեւ՝ այս տարողութեամբ ցոյցերը՝ Նորայայտ երեւոյթ մըն էր, բռնատիրական վարչակարգին տակ, որ խմորուած չէր լոկ երկու շաբթուան ընթացքին, այլ՝ խիստ հաւանաբար, վերջին տասնամեակին ընթացքին, մէկէ աւելի գործօններու՝ իրարու զուգահեռ զիրար ամբողջացնող դերակատարութեան իբր արդիւնք: Եւ որովհետեւ՝ Փութինի յորդորը... թելադրուած էր նաեւ՝ ազգայնական Ռուսաստանի ազգային շահերէն, որոնք նաեւ՝ կը համընկնին Հայաստանի ազգային շահերուն հետ, Փանթուրքիզմի հասարակաց վտանգին դէմ... որուն փաստն է՝ ռուսական բանակին ներկայութիւնը՝ հայ-թրքական սահմանին վրայ...:

Լուսամիտ, յեղափոխական եւ հայրենասէր Նիկոլ Փաշինեանի ղեկավարած «Ելք» կուսակցութեան կազմակերպչական գլխաւոր գործօնի կողքին, վերջին տասնամեակին մասնաւորապէս, հետեւողականօրէն աշխատեցան նաեւ՝ քարոզչական, դաստիարակչական եւ հանրային կարծիքը ուղղորդող երկու կարեւոր գործօններ եւս, որոնց մէկը՝ համակարգին կիրարկած վայրի դրամատիրական քաղաքականութեան ստեղծած ահազանգային ու ճգնաժամային իրավիճակը կը պարզէր՝ հանրային կարծիքին, անոր ամէն օր յուշելով, թէ՛ իրավիճակը հիմնովին փոխելու յեղափոխութեան առարկայական նախապայմանները արդէն ստեղծուած են երկրին մէջ, ատիկա՝ երկրի լրատուական միջոցներու համարձակախօս աշխատակիցներու բանակն էր: Միւսը՝ համակարգին կողմէ ստեղծուած, յեղափոխութեան առարկայական նախապայմաններէն մեկնելով՝ յեղափոխութեան ենթակայական պայմաններն ալ ստեղծելու համար, կը ջանար՝ ժողովուրդին մօտ՝ յեղափոխութեան ձեռնարկելու գիտակցութիւնը եւ պատրաստակամութիւնը արթնցնելու գործօնն էր, որուն զինուորագրուեցան հոյլ մը փոքրաթիւ հայրենի եւ սփիւռքահայ մտաւորականներ, որոնք կոչերով, քարոզչական հրապարակագրութիւններով, հրապարակախօսութիւններով, նաեւ՝ հատորներով, դաստիարակեցին եւ ուղղորդեցին հայրենի ժողովուրդը հետեւողական յարատեւ շունչով,



անտեսելով՝ իրենց պահպանողական, համակերպողական, պատեհապաշտ, կրաւորական, յեղափոխական ոգիէ զուրկ, բնագանցական մտածելակերպի տէր եւ մորթապաշտ ու եսակեդրոն բարեկամ մտաւորականներու՝ զգուշացումները, խելոքութեան քարոզները, հաւատազուրկ խրատներն ու նոյնիսկ՝ պարսաւանքները...:

Այս փոքրաթիւներէն մին էր տողերուս հեղինակը, որ քառորդ դար գրեց եւ բանախօսեց՝ Գ. Զանրապետութեան վայրի դրամատիրական ու քրեածին օլիգարխիական ապագգային, թալանչիական ու բռնատիրական համակարգէն Արեւելահայաստանը ազատագրելու հրամայականին շուրջ, մօտ 100 յօդուածներ, մօտ 50 բանախօսութիւն եւ մօտ 10 հատորներ: Անոր նախավերջին հատորին մէջ՝ «Դարադարձի Անդոհանք եւ Մարտակոչեր» (Պէյրուք, 2014, Զրատ. Ֆարապի, 720 էջ) կան չորս աստիճանական մագլցումով ՄԱՐՏԱԿՈՉԵՐ... որոնք կը խտացնեն՝ քառորդ դարեան պատճառաբանութիւնները՝ օլիգարխիական համակարգին արմատական, յեղափոխութեամբ վերացումի կոչին, որ այս արմատական վերացումը կը նկատէ՝ պատմական անհրաժեշտութիւն...:

Ուրեմն, ներկայ գրութեամբ կ'ուզենք անգամ մը եւս ընթերցողներուն համար խտացնել չորս մարտակոչերը, որպէսզի անոնք լուսաբանուին, որ Նիկոլ Փաշինեանի ղեկավարած «Ելք» կուսակցութեան կազմակերպած այս յեղափոխութիւնը՝ անսպասելի կամ անըմբռնելի չէ, այլ՝ պատմական անհրաժեշտութիւն մը, որ շատ ուշացաւ...: Նաեւ, որպէսզի՝ Շարժումին գործածած «թաւշեայ» որակականը չմոլորեցնէ հասարակութիւնը շփոթ ստեղծելով՝ այս շարժումին եւ ամերիկեան իմփերիալիզմի «գունաւոր յեղափոխութիւններ»ուն միջեւ...:

...

«Դարադարձի Անդոհանք եւ Մարտակոչեր» գիրքի Բ. մասը (էջ 128-163) յատկացուած է չորս մարտակոչերուն, իբր մուտք ունենալով հետեւեալը.

Արեւելահայաստանի մէջ իշխող քրեածին օլիգարխներու վայրի դրամատիրական համակարգը՝ հայաթափեց ու թալանեց երկիրը, վայրագօրէն ոտնակոխեց ընկերային արդարութիւնը, եւ իր արտաքին քաղաքականութեամբ՝ կոմպլեմենտար..., Արեւմուտքին ու Թուրքիոյ յարող... վնասեց հայրենիքի անվտանգութեան... եւ երկիրը այս համակարգի վտանգէն փրկելու միակ ուղին կը հանդիսանայ՝ համակարգային յեղափոխութիւնը եւ ոչ թէ՝ ներգլանային (ներօլիգարխիական) հերթափոխութիւնը:

Առանց համակարգային զինեալ կամ խաղաղ յեղափոխութեան՝ չիք փրկութիւն:

Մարտակոչ Ա.ի (16 Յունուար 2011, «Արարատ» օրաթերթ, 21 Յունուար 2011) վերնագիրն է «Մինչեւ Ե՞րբ Պիտի Շարունակուի Զոգեկան Ախտը՝ Ապաւինողականութեան»:

Այս վերնագրին տակ, նախ՝ մատնանշուած է, թէ ապաւինողականութիւնը յատուկ է եւ բնական՝ միայն մանուկին, անչափահասին կամ հիւանդին ու անկարին, բայց անբնական է եւ աններելի՝ չափահասներուն համար: Ապա, փաստերով հաստատուած է, թէ՛ վերջին մէկ դարու մեր պատմութեան մէջ, այլազան անհամոզիչ պատճառաբանութիւններով, մենք միշտ եղած ենք կրաւորական ու ձեռնպահ, ուրիշներէ եւ դուրսէն սպասած ենք փրկութիւն, բացի՝ երեք ճակատագրական պահերէ.

1918 թ. Մայիսին, Սարդարապատի համաժողովրդային ինքնապաշտպանութեան յաղթական ճակատամարտէն:



1920 թ. Մայիսին, Ա. Յանրապետութեան համակարգին դէմ Մայիսեան ապստամբութիւնը, որ արեան մէջ խեղդուեցաւ:

Եւ 1988 թուի Փետրուարին, ԼՂԻՄ-ի Սովետի ինքնորոշումի պատմական որոշումը:

Ապա նաեւ՝ կատարուած է հետեւեալ մեջբերումը «անկախ» Արեւելահայաստանի մամուլէն.

«Իշխանութիւնները ներքին կեանքում իրավիճակը հասցրել են այն աստիճան սոցիալական, տնտեսական եւ բարոյահոգեբանական սրացման, որ Հայաստանի հասարակութիւնը ԱՄՆ-ից եւ Եւրոպայից է սպասում, որ նրանք ճշում բանեցնեն իշխանութեան վրայ եւ ստիպեն՝ երկրի ներսում հաշուի առնել հասարակութեան կարիքն ու պահանջները...»:

Եւ մենք հարց տուած ենք. «Իսկ ի՞նչու «անկախ» Հայաստանի հասարակութիւնը պիտի ապաւինի դուրսի պետութիւններուն, փոխանակ՝ ինք բանեցնելու ճշումը իշխանութեան վրայ... ի հարկին՝ յեղափոխութեամբ»:

Հուսկ կատարուած են մօտ քսան մեջբերումներ Հայաստանի մամուլէն, որոնց մէկ մասը գէթ հարկ է հոս մեջբերել, ինչպէս.

• «Հայաստանը անկախ ու գերիշխան պետութիւն չէ այսօր: Ամերիկեան FBI-ի գործուղած աշխատակիցները գտնուում են վերջերս Երեւանում, ԱՄՆ-ում ձերբակալուած յանցաւոր խմբաւորման հետքերը ստուգելու համար: Ռուսերը Քոչարեանի գումարները Հայաստանի բանկերում, մասնաւորապէս՝ «Արդշինինվեստ» բանկում, եւ՝ «Կոնվերսբանկ»-ում որը կապում են Քոչարեանի որդու Սեդրակի հետ...: Սա ոտնահարում է Հայաստանի Սահմանադրութիւնը եւ Օրէնսդրութիւնը...»:

• «Հայաստանից արտագաղթողների թիւը՝ 1.5 միլիոն, համարժեք Եղեռնի թիւին՝ 1.5 միլիոն հայ: Սա ժողովրդագրական կատաստրոֆիա է: Ի՞նչ է անում կառավարութիւնը դրա դէմ առնելու համար. ոչ մէկ բան: Ընդհակառակը, վարչապետը հպարտանում է, որ արտագաղթի արդիւնքում 28 տոկոսով աւելացել են տրանսֆերտները: Իշխանութիւնները կ'ապաւինեն դրսից տրանսֆերտներին եւ քրեական օլիգարխների բարեգործութիւններին...»:

• «Սերժ Սարգսեանն ասում է՝ ես շատ վատ վերաբերում ունեմ՝ բանակում գոյութիւն ունեցող թերութիւնների պախարակման դէմ: Բանակը հասարակութեան հայելին է, եւ ի հարկէ միշտ բանակում գոյութիւն ունենալու են այս կամ այն չափով, այն թերութիւնները եւ ժխտական երեւոյթները, որոնք գոյութիւն ունեն հասարակութեան մէջ...»:

• «Եթէ ներկայի գահավեժ ընթացքը շարունակուի, հետեւանքը լինելու է կիսատ-պռատ անկախ պետականութեան կործանումը: Էլ աւելի աղետալին՝ հայրենիքի զգալի մասի կորուստը, մի գուցէ նաեւ՝ առհասարակ, Հայաստանի վերացումը...»:

Վերոյիշեալ ահազանգային բացայայտումներուն լոյսին տակ, կը հաստատենք հետեւեալները.

– Վայրի դրամատիրական քրեաօլիգարխիկ համակարգով Գ. Յանրապետութիւնը՝ արդէն չէր կարող անկախ ըլլալ ԱՄՆ-էն:



– Տրանսֆերտները եւ քրեածին օլիգարխներու «բարեգործութիւնները»... միայն կը թուլացնեն ու կը մեղմեն՝ ժողովուրդին միայն մէկ մասին մօտ, իշխանութեան դէմ դժգոհութիւնը, բայց ոչ՝ մեծամասնութեան, որ կոչուած է տապալելու այս համակարգը:

– Սերժ Սարգսեան, անհրաւօրէն եւ եպերեյի կողմնակցութեամբ՝ բանակին մէջ ժխտական երեւոյթները կը վերագրէ ժողովուրդին, մինչդեռ այդ ժխտական երեւոյթները հետեւանքն են քրեածին օլիգարխներու սանձարձակ գործունեութեան, զոր հարկ է արմատախիլ ընել՝ յեղափոխութեամբ, քաղաքացիական խաղաղ թէ ի հարկին զինեալ պայքարով:

– Վայրի դրամատիրական Գ. Զանրապետութեան համակարգին գահավեժ ընթացքին շարունակումը բնաւ մտահոգած չէ Սերժ Սարգսեանը, որովհետեւ ինք, նոյնացած է՝ իր հետ տանելով նաեւ Էջմիածինը, այդ համակարգին հետ: Սակայն, պետական մտածելակերպ ունեցող ՄԻԲՍ Սարգսեանը՝ նահատակ Վազգէնը, նահատակութենէն միայն ամիսներ առաջ, 1998-ին, տեսնելով համակարգին գահավեժ ընթացքը, արտայայտած էր հետեւեալ մտահոգութիւնը.

«Եկել է ժամանակը կանգ առնելու, եւ մի պահ յետադարձ հայեացք նետելու: Ո՞ր ենք գնում...: Ի՞նչ իշխանութիւն ուզում ենք ունենալ...: Ումի՞ց ենք թաքցնում: Ումի՞ց ենք գողանում...: Ի հարկէ՝ մեր սերունդներից եւ... ապագայից...»:

Ճիշդ այս մտահոգութեան հրապարակման պատճառով ալ նահատակեալ պետական այրը, հայրենասէր հերոսը կը խօսէր աւագակապետական համակարգի իշխանութիւնը վերացնելու անհրաժեշտութեան մասին, համակարգային իշխանափոխութեան հրամայականին մասին, մեր սերունդներէն եւ հայրենիքի ապագայէն գողցողները՝ իշխանութենէն վար առնելու մասին...:

Ո՞ր են հայրենասէր ու յեղափոխական ուժերը: Չե՞ն լսեր նահատակեալ հերոս Վազգէնի այս պատգամը...:

•••

Մարտակոչ Բ.ի (27 Փետրուար 2011, «Արարատ», 2 Մարտ 2011) խորագիրն էր. «Ներհամակարգային Զերթափոխութիւն Թէ՛ Զամակարգի Վերափոխութիւն»:

Եւ հայրենի մամուլէն կը մեջբերուէին շուրջ 20 վկայութիւններ՝ դրամատիրական համակարգին գործած բազմաճիւղ աւերներուն եւ հայ մարդու բարոյական դիմագիծին խաթարման ու չարափոխման շուրջ: Իբր միայն օրինակ՝ հետեւեալները.

- «Վշտահար մայրեր ասում են՝ մենք մեր որդիներին հայոց բանակ ենք ուղարկում, որպէսզի՝ մեր սահմանները միշտ պաշտպանուած լինեն, իսկ փոխարէնը, անոնք մեզ վերադարձնում են մեր որդիների դիակները, որովհետեւ՝ նրանք չեն կարողացել վճարել գումարտակի հրամանատարի պահանջած 100 տոլարը...: Վերջ տուէք բանակում մարդասպանութիւններին...»:

- «Յակոբ Յակոբեան բողոքում է՝ Զայաստանում անկախութիւն եղաւ չէ՞: Ուրեմն ի՞նչ էր սպասում, որ հայերը պիտի վեր-վեր թռչէին՝ ուրախութիւնից: Ի՞նչ ըրին: ... Թռան վեր, բայց՝ օդանաւով... օդանաւերը նստան, փախան ուրիշ երկիր...»:



• «Հոկտեմբերի 27-ին, պետականութիւնը գլխատուեց: Այդ օրուանից մինչ օրս՝ ռոմանտիկ մեռնում ենք... քանի որ այդ ոճրագործները՝ «ռոմանտիկներ» էին միայն...: Սրանք են Նորագոյն «անկախ» Հայաստանի լեգենդներն ու առասպելները...»:

• «Հայաստանում անասունները (կամ՝ միեւնոյն է, նրանց տերերը...) մարդկանցից ավելի գնողունակ են... Հոս՝ Հայաստանում, գարին ավելի թանկ է քան՝ ցորենը, քանի որ ցորենը ներկրում ենք՝ Էժան գնով, Ռուսաստանից: Իսկ գարին՝ հիմնականում տեղական արտադրանք է... ավելի թանկ գնով»:

• «Մովսէս Տեմիրճեան, փիլիսոփայական գիտութիւնների թեկնածու, դիտարկում է՝ վերջին երկու տասնամեակի ընթացքում միայն, դրամատիրութեան մենաշնորհային համակարգում, հայերը իրենք իրենց մասին, պարզեցին, որ հայերը նաեւ կարող են ըլլալ դաւաճան՝ պետական եւ ազգային մակարդակների վրայ, կարող են ըլլալ ստոր ու դաժան, եւ այդ ամէնը՝ դրամի եւ իշխանութեան համար: Վերջին քսանամեակին վերացաւ՝ հայու այն յօրինուած կերպարը, ըստ որի՝ հայը աշխատասէր, իմաստուն, գթասիրտ, արդարամիտ եւ կիրթ մարդ է, եւ չունի թերութիւններ...»:

• Վիկտոր Դալլաքեան՝ անկախ պատգամաւոր, ահագանգում է՝ Հայաստանի պետութիւնը վտանգուած է: Հոս տիրող տնտեսական համակարգում գործող մենաշնորհները ստանում են գերշահոյթներ, եւ դրանք օգտագործում են քաղաքական նպատակների, մասնաւորապէս՝ կեղծելու ընտրութիւնները եւ՝ մասնակցելու քաղաքական որոշումների կայացմանը: Պետութեան համար, չափազանց վտանգաւոր է՝ գերկենտրոնացած, ոչ-պետական, մի քանի ընտանիքներին պատկանող տնտեսութիւն ունենալը: Այս մի քանի ընտանիքները՝ ոչ միայն հացի փող չունեցող ժողովրդի շահերին դէմ են գործում, այլեւ՝ պետութեան քաղաքական անկախ որոշումներ կայացնելու իրաւունքին դէմ...: Հետեւաբար, պետք է արգիլուի բիզնեսով զբաղւողներին, քաղաքականութեամբ զբաղւելը եւ՝ պատգամաւոր դառնալը...»:

Ուրեմն, Հայաստանի տնտեսութիւնը երկրի համայն ժողովուրդին վերադարձնելու համար, երկրի կենսունակ ու գործօն եւ մարտունակ ուժերը հարկ է որ հաղորդուին ժամանակակից յեղափոխական շունչով եւ չափահասներու յատուկ նախաձեռնութեան ոգիով, եւ տապալեն՝ մի քանի ընտանիքներու հակաժողովրդային, հակազգային ու բռնատիրական համակարգը, հաստատելու համար ժողովրդահայրենասիրական՝ սոցիալիստական համակարգ:

...

Մարտակոչ Գ.ի (24 Ապրիլ 2011, «Արարատ», 29 Ապրիլ 2011) վերնագիրն է. «Հայաստանի Փրկութիւնը Հի Գար «Սենատ»ով, Այլ՝ Համակարգային Լուրջ Վերափոխումով», եւ իբր ելակետ ունի հետեւեալը.

Մեծ Եղեռնի դարադարձին նախորդող ներկայ պահին, հիմնականօրէն վերակազմակերպուելու կարիքը ունի Հայ Սփիւռքը, եւ արմատականօրէն վերափոխուելու կարիքը ունի Արեւելահայաստանը: Հայ Սփիւռքը պարտի անյապաղ կազմակերպել Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Քոնկրետը (ՏԱՀՔ), իսկ Արեւելահայութիւնը՝ պարտի երկիրը ազատագրել քրեաձին օլիգարխներու օտարոտի ու



դաժան լուծեն, պայքարի իբր նշանաբան ունենալով. «Եղեռնի դարադարձը՝ առանց Սերժի»...:

Հոս եւս կան շուրջ 20 մեքբերումներ հայրենի մամուլէն, որոնք կը պահանջեն՝ աւագակապետական համակարգը արմատախիլ ընել եւ անոր փոխարէն հիմնել ժողովրդահայրենասիրական համակարգ: Այս մեքբերումներէն մի քանի ստորեւ.

- «2011 թուականին աշխարհ սկսեց բողոքների, ժողովրդական ըմբոստացումների եւ ապստամբութիւնների անսպասելի ալիքով: Տասնամեակներ շարունակ իրենց դիրքերը հաստատած եւ արտաքին ուժերի աջակցութիւնը վայելող միլիառդատեր բռնապետները տապալւում են, կամ՝ տապալման սպառնալիքի առջեւ են կանգնում: Մերձաւոր Արեւելքի, անգամ՝ Արաբական Աֆրիկայի ժողովուրդները այսօր սոցիալական պայքարներ են մղում, պահանջում են՝ դեմոկրատիա եւ սոցիալական արդարութիւն: Ի՞նչ դիրքերում կը մնայ մեր Հայաստանը, այս գլոբալ վերափոխումների շրջանում: Ի՞նչպէս կը մասնակցի մարդկութեան զարգացման այս պայքարներին: Սա հիմնականում կախուած է մեզանից. կը կարողանա՞նք արդեօք ձեւաւորուել քաղաքականապէս եւ կազմակերպուել եւ որպէս հայ ժողովուրդ (եւ պետութիւն՝ ի հարկին) համամարդկային միջազգային ԳՈՐԾՕՆ դառնալ, եւ ոչ թե՛ ԳՈՐԾԻԶ ուրիշների ձեռքում...: Եթէ չդառնանք այդ գործօնը... ինքներս մեզ մահուան ենք դատապարտելու...: Այս է սպասում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային ու ժողովրդագրական խոր եւ տեւական անկում ապրող մի հաւաքականութեանը կամ ժողովրդին... որպիսին է այսօր Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը: (Տես՝ Մարդու Իրաւունքների եւ Ժողովրդավարութեան Ինստիտուտի ակադեմիական, հեղինակաւոր հանդէս «ՄԻԺ»ի 2011 թ. Բ. համարի «Ժամանակը Եկած է Որպէսզի՝ ՀՀ Ժողովուրդն ու Պետութիւնը Որակապէս Վերափոխուեն ու Վերակազմակերպուեն»):

- «ԱՆԿԱՄ» (9 Փետրուար 2011), Կարլէն Ասատրեան. «Իւրաքանչիւր պետութիւն ինքն է իր անվտանգութեան հիմնական երաշխաւորը: Ցանկացած պետութիւն արտաքին վտանգները դիմագրաւում է այնքանով, որքանով ինք ուժեղ է՝ ՆԵՐՄԻՑ: Որքանով է ուժեղ Հայաստանը՝ ՆԵՐՄԻՑ, որքանով ենք մենք պատրաստ համախմբուելու... եւ հնարաւոր արտաքին ագրեսիան համատեղ չեզոքացնելու: Այս հարցի ծիրում կայ մի շատ ցաւալի հիմնախնդիր... մեր երկրում Պետական Պաշտօններ զբաղեցնող անձանց կոմպետենթութեան (competence), այսինքն՝ ձեռնհասութեան խնդիրը...: Բաւական է ՄԷԿ ՕՐ միայն հետեւել հայկական մամուլի հրատարակումներին, հասկանալու համար, թէ ինչ ձեռնհասութեան աստիճան ունեն մեր Պետական «ՓՈՒՉԻԿ» պաշտօնեաները...: Օրինակ՝ Հանրապետական իշխող կուսակցութեան մամուլ խօսնակ Էդուարդ Շարմանազով՝ Արցախի շուրջ մի հարցումի պատասխանելով ասել է. «Եթէ Ատրպէյճան պատերազմ սանձադերձի, ապա Հայկական բանակը մեր սահմանը կ'ընդլայնի Արցախի սահմաններից մինչեւ Պատմական Հայկական Կուր-Արաքս խառնարան...»: Իսկ միեւնոյն կուսակցութեան փոխ-նախագահ Ռազմիկ Զօհրապեան, Նոյն հարցին պատասխանել է. «Այդ դէպքում ես չեմ բացառում մէկ-երկու տարածքների Ատրպէյճանին վերադարձնելը...»: Մենք «ազատագրել» ենք այդ տարածքները, թէ՛ «բանակցել», որ «վերադարձնենք»... եւ այն բանակը որ կարող պիտի ըլլար Արցախի սահմանները «ընդլայնել», ինչո՞ւ պիտի մէկ-երկու տարածքներ «վերադարձնել»...: Մէկ ուրիշ օրինակ. ՀՀ ԱԺ պատգամաւոր Սամուէլ Բաշեանը, Եգիպտոսում տեղի ունեցող հակակառավարական ցոյցերի եւ Հայաստանում նմանօրինակ իրավիճակի ստեղծման հաւանականութեան մասին լրագրողի հարցին պատասխանել է. «Սոցիալական բռնտն (պոռթկում) Էմոցիոնալ պոռթկում է, որը կարող է լինել անգամ



ամենաբարեկեցիկ երկրներում: Բայց բացարձակ անտրամաբանական է զուգահեռներ անցկացնել Արաբական երկրների հետ: Թեև՝ այդպիսի հաւանականութիւնը հնարաւոր չէ բացառել Հայաստանում: Բայց արդէն, ոչ մի բունտ՝ որեւէ երկրում, դրական արդիւնքի չի յանգեցրել: Այսպէս՝ Հայաստանում, պաշտօնեաների մեծ մասը չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտօնին, որովհետեւ՝ նշանակումները կատարուում են անլուրջ, մակերեսային ու ԽԾԲ-ական հաշիւներով...: Սրա մէկ ցայտուն օրինակ է մանկապոլսական մէջ մեղադրուող Սերոբ Տէր Պօղոսեանը... որ միաժամանակ ՀՀ Ոստիկանութեան Ընկերային-Բարոյական Խորհուրդի անդամ է... ՀՀ վարչապետի խորհրդականը՝ ընկերային-բարոյական հարցերի, եւ... ընկերային համագործակցութեան համար տիպար մետալակիր, բացի՝ Ախթալայի լեռնահարստացման քումպինաթի սեփականատէր լինելուց...: Իսկ ՀՀ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեանը (որ ակելի ուշ վարչապետ նշակաւուեցաւ..., Գ.Տ.) յայտարարել է. «Քաղաքական գործիչը պարտաւոր չի՝ խելացի լինել...: Այսօրինակ պաշտօնների համար կարելորդ ՉԼՄ-ներում ԵՐԵՒՆԱԼԸ Է, ... առանց յստակ մտքեր ձեւակերպելու եւ առանց ըսածի լրջութիւնը հասկնալու»: (Այս անպատկառ ու լպիրշ ինքնաբացայայտում-խոստովանութեան կը նմանի՝ Լիբանանի խորհրդարանին ալ նախագահին, որ փաստաբան մըն է... հետեւեալ խոստովանութիւնը. «Դատարանը՝ տկարներուն համար է... իսկ Չայիմին (մեծապետ, պարագլուխ, խմբապետ...) ուժը փողոցին մէջ է...»: Այսինքն, իր վարձկան փողոցային խուլիգաններուն):

- «Հայաստան» (24 Փետրուար 2011). «Այն որ Հայաստանում քաղաքացիները՝ գործատուների համար, գտնուում են ՃՈՐՏԻ, ՍՏՐՈՒԿԻ վիճակում, եւ ՇԱՀԱԳՈՐԾԻՈՒՄ են՝ անօրէն եւ անխնայ, որեւէ մէկի համար չի կարող գաղտնիք լինել...: Կարդում ենք՝ հասկանալի է, թէ ինչ է նշանակում սոցիալական ներկայիս ծանր պայմաններում, յանկարծ տեղեկանալ, որ դու այլեւս չես աշխատելու...: X գրուփի մենաշնորհի տէր՝ Խաչիկ Խաչատրեան հենց այդպէս, մեզանից շատերին յանկարծ տեղեկացրեց, որ մենք այլեւս չենք աշխատելու...: Երեւի նրան ոգեւորել է իշխանութիւնների վերաբերմունքը ժխտական՝ օրինակ. փողոցի մանր առեւտրականների հանդէպ: Եթէ իշխանութիւններն են նման անմարդկային կերպով վարուում օրուան հացի գումար միայն վաստակողների հետ, հապա ինչ սպասենք մի գործարարից (կապիտալիստից), որը թքած ունի այն բանի վրայ, թէ ինչպէս են գործագորկ աշխատաւորները հոգալու իրենց ապրուստի հարցը...: Հասկանում ենք ԿԱՊԻՏԱԼԻՉՄ... եւ ՄԱՍՆԱԲՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԵԱՆ կոչուածի ԵՈՒԹԻՒՆԸ, սակայն նրանք չեն հասկանում որ այսպիսով՝ ԿՈՐՉԻՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՈՒԹԻՒՆԸ...»:

- Էդուարտ Անտինեան, «168 Ժամ»ի 22 Փետրուար 2011 թուակիր համարին մէջ, կու գայ ցոյց տալու այս համընդհանուր ճգնաժամէն դուրս գալու միակ ուղին, որ կրկնութիւնն է՝ մեր Մարտակոչ Բ.ի ցոյց տուած ուղիին: Ան կը գրէ հետեւեալը. «Երկրի իրաիվճակը ընդամենը հերթական անգամ ըլլալով, յիշեցնում է, որ մեր հասարակութիւնն իշխանութիւններից կարող է ազատուել միայն ու միայն՝ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ճանապարհով...: Այլեւս հանրութեանը չեն կարող համոզել, թէ հնարաւոր է սահմանադրական ճանապարհով՝ ընտրութիւնների միջոցով... ներգլանային հերթափոխութեամբ՝ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ իրականացնել...»:

Ուրեմն, հայրենի ժողովուրդը գիտէ արդէն իշխանափոխութեան ուղիղ՝ յեղափոխական ճանապարհը...: Արդէն գիտակցած է յեղափոխութեան անփոխարինելիութեան:



...

Մարտակոչ Դ.ի (15 Դեկտեմբեր 2011, «Նայիրի», 28 Փետրուար 2012) խորագիրն է. «Համակարգային Յեղափոխութիւն»: Այս ուղիղ եւ կարճ, բայց եւ՝ խիտ խորագիրն տակ, մեջբերուած են երկու կոչեր... Մէկը՝ Շառլ Ազնաւուրէն, որ կը վճռէ. «Հայաստանի մաֆիոզներին պետք է՝ գնդակահարել...»: Միւսը՝ Դոկտ. Փրոֆ. Արամայիս Միրզախանեանէն, որ կը հաստատէ. «Այս պահուն՝ համակարգային փոփոխութիւն է պահանջուում, ընդհուպ մինչեւ յեղափոխութիւն»:

Ինչպէս կը տեսնէք՝ այս երկու կոչերէն առաջինը արձակած է՝ ի ծնէ արուեստագետ մը, անզուսպ սաստկութեամբ, իսկ երկրորդը՝ ի ծնէ գիտնական մը, խոհուն ու կշռադատ ոճով մը, որ կարծէք առաւել ցասումային կ'ընծայէ առաջինի պոռթկումային ոճը: Սակայն, Չուիցերիոյ մօտ ՀՀ պատուակալ հիւպատոսին պոռթկումը զուտ զգացական չէ, արուեստագետի սրտի պոռթկումը չէ, այլեւ՝ իմացական է, մտային ըմբոստութեան հետեւանք է..., քանի որ աւելի ուշ, Մոսկուայի մէջ, ան՝ հայրենի ժողովուրդին դէմ մաֆիոզներու գործած ոճիրները որակեց «ներքին ցեղասպանութիւն»... եւ «համամարդկային խնդիր մը»...:

Այս չորրորդ Մարտակոչին ենթահողը հանդիսացաւ այն նորագոյն զարգացումը, երբ Յեղափոխութեան առարկայական նախապայմաններու լրացման փուլին, եկաւ յաւելլուլ նաեւ՝ անոր ենթակայական ալ նախապայմաններուն լրացման փուլը, ինչ որ ipso facto անխուսափելի դարձուց Յեղափոխութիւնը, աւելորդ դարձնելով՝ ներսի եւ դուրսի մարտակոչերը: Զանի որ՝ Մարքսեան լեզուաբանութեամբ, Յեղափոխութեան պատմական անհրաժեշտութեան առարկայական ու ենթակայական նախապայմանները հասունցած էին Արեւելահայաստանի մէջ: Կը մնար գործել՝ այդ անհրաժեշտութեան իրագործման ուղղուածութեամբ, որ կը պահանջէր լուռ ու մունջ, գաղտնի եւ հետեւողական երկար շունչի նախապատրաստական կազմակերպչական աշխատանք: Եւ այս աշխատանքին՝ պատմական իրագործման աշխատանքին մասնակիցներն են միայն, որոնք կը համարուին ազատութիւն գործողներ, Մարքսեան փիլիսոփայութեան մէջ: Ճշմարիտ, իսկական ազատութիւնը՝ այս աշխատանքը սատարելն է եւ կատարողին է: Որովհետեւ՝ Ազատութիւնը, անձնական կամ անհատական, կամայականութիւն չէ, նպատակազուրկ սանձարձակութիւն չէ, հասարակութեան հանդէպ անպատասխանատւութիւն չէ, այլ՝ հասարակութեան մը պատմական անհրաժեշտութիւնը դարձած ծրագրին իրագործման մասնակից դառնալն է...: Այս է Մարքսեան փիլիսոփայութեան՝ պատմական եւ դիալեկտիկական մատերիալաշտութեան սահմանումը՝ Ազատութեան: Պատմութեան յառաջընթացին հետ քալելն է ազատութիւնը:

Արեւելահայաստանի մէջ, Յեղափոխութեան ենթակայական ալ նախապայմաններուն գոյառումին փաստերն էին՝ երկրի մամուլին մէջ լոյս տեսած ըմբոստութեան, ապստամբութեան եւ յեղափոխութեան ամենօրեայ հազարաւոր կոչերը, որոնցմէ միայն մօտ 20 մեջբերումներ կատարած էինք այս չորրորդ Մարտակոչին մէջ: Ստորեւ յիշենք միայն մի քանի նմոյշ.

- Դոկտ. Փրոֆ. Ա. Միրզախանեան «ՆՈՐ ԽՕՍԷ» կայքէջին վրայ գրած «Ո՞րն է Այլընտրանքը... Յեղափոխութի՞ւն, Թէ՛ Կանտիի Ճախարակ» վերնագրով գրութեան մէջ կ'ըսէ. «Երկրի բոլոր մարզերի մէջ ապրած ճգնաժամը եւ ամենասարսափելին՝ ժողովրդի հաւատքի կորուստը ապագայի նկատմամբ: Պարզորոշ հաստատում են, որ Հայաստանում՝



տնտեսական-ընկերային ու քաղաքական յեղափոխութեան իրավիճակի գոյառումը եւս անխուսափելի է դառնում: Գարունը չեն պատուիրում... Գարունը ԻՆՔՆ Ե ԳԱԼԻՍ... թէկուզ՝ ուշացումով: Բոլորս էլ գիտակցում ենք, որ խնդիրների յեղափոխական ելքով լուծումը լաւագոյն միջոցը չէ... սակայն՝ երկրի իշխանութիւնները՝ թաթար-մոնկոլական, թալանչիական եւ օլիգարխիկ, այլընտրանքի տեղ չեն թողնում...»:

- «ՆՈՐ ԽՕՍԷ»ի խմբագիրը՝ Երուանդ Խոսրովեան, կը գրէ. «Մենք դրախտից վտարուեցինք ոչ թէ մեր անհնազանդութեան պատճառով, այլ՝ մեր իսկ կամքով մեր սեփական ուսին դրած «խաչ»ը կամովին կրելու ենթարկուողականութեան համար: Դրախտի դուռը միշտ բաց է, եթէ մենք՝ մեր «խաչ»ը մեր ուսերից վար դնենք եւ ՄԵԶ ԽԱՉՈՂԻՆ ԽԱՉԵՆՔ: Այդ ժամանակ կ'աւարտուի ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ վերջին էջը Յայաստանում, եւ մենք կը վերադառնանք՝ մեր նախկին իսկական ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴՐԱԽՏԸ...»:

- «Գիտակից եւ ողջմիտ քաղաքացին հարց է տալիս, թէ ինչո՞ւ շատերը արտագաղթից են խօսում, փոխանակ՝ կոչ անելու՝ մնալ եւ պայքարել արտագաղթի պատճառներին պատասխանատուների իշխանութեան վերացման համար...»:

- «Ուրիշ քաղաքացի մը բացատրում է՝ որ իշխանութեան համար արտագաղթը դարձել է ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (Ոսկի Մէկ Միլիոնի...) եւ վարչապետն ասում է. «Եթէ դժգոհ զանգուածը մնայ երկրում, ապա՝ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻԲԻՆՆ անխուսափելի կը լինի...»: Բայց, անհասկնալին՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ կոչուած կուսակցութիւնների համակերպումն ու ձեռնպահութիւնն է՝ արտագաղթը եւս շահագործող իշխանութիւնների նկատմամբ: Սակայն, անխուսափելի է այն, որ շատ մօտիկ ապագային, ճշմարիտ ընդդիմադիր ուժերը ձեռնարկելու են ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ...»:

- «Մեր հայրենիքը դարձել է մի խումբ վայրագ, ազահ, դաժան, անբարոյ եւ քրեածին մարդկանց կողմից ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏ: Պահը՝ «Սարդարապատային» է: Սարդարապատական Ոգի, յամառ կամք, յեղափոխական համախմբուածութիւն է պետք, որպէսզի՝ կարողանանք այս իրավիճակից դուրս գալ, եւ երկիրը վերադարձնել իսկական տիրոջը՝ Ժողովրդին: Ժողովրդավարութիւնը կառուցւում է՝ ազգային հարստութիւնները Ժողովրդին հասանելի դարձնելու հիմքի վրայ: Իսկ մեզ յօշոտող Էս մարդիկ՝ ո՞նց են հասել երկրի իշխանութեան: «Քաջ Նազար» հեքիաթի մէջ, ասուել է. «Երկիրը եթէ սարսաղ չլինի, Նազարը երկրի թագաւոր չի՛ լինի...»: Օ՛ն ուրեմն, արթնանանք... ու տապալենք մեզ յօշոտողներին...»:

- «Էջեր, էջեր, հազարաւոր էջեր կարող ենք գրել՝ յուսահատութեան, թշուառութեան, հիասթափութեան, շահագործումի, բռնարարքների եւ ընկերային անարդարութեան ճիրանների մէջ տառապող ճակատագրերի մասին, վառող, այրող եւ ըմբոստացնող էջեր...: Սակայն, Նարեկացու նման, ամէնից առաջ՝ պախարակում, դատապարտում եմ ես ինքս ինձ, որ այսքան տարիներ լռել եմ, ինձ չտեսնելու եմ տուել, յարմարուել եմ, համակերպուել եմ ու հանդուրժել Եւքան ՉԱՐԻԷ...: Ամօ՞թ ինձ: Ամօ՞թ համայն Յայութեան, եւ ամէնից առաջ՝ մեր ՄՏԱԲՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, որը շարունակում է կանգնել «խուլ ու մուկ վասակների» դիրքերում, ինչպէս Մեծն Պարոնեանն է բնութագրում, եւ շարունակում է ոտնակոխ անել Մեծն Թումանեանի պատգամը. «Լռութիւնը ՆԵՐԵԼԻ ՉԻ մտաւորականութեան: Նրանք ԱՌԱՋ ՊԵՏԵ Ե ԱՆՑՆԵՆ, քննեն, որոնեն եւ Ժողովրդին ցոյց տան թէ Ո՞ՐՆ Ե ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՅԸ...»:



Մեր չորրորդ եւ վերջին Մարտակոչը եզրափակուած է հետեւեալ ինքնավստահ, լաւատեսական տողերով.

Ահա հիմա հասունցած են Յեղափոխութեան առարկայական եւ ենթակայական Նախապայմանները Արեւելահայաստանի մէջ եւ արդէն՝ մենք չէ որ պիտի պատուիրենք Արեւելահայաստանի ժողովուրդին Գարունը... այլ՝ Գարունը ինքն է որ պիտի գայ... ՎՍՏԱՅԱԲԱՐ...:

•••

Այսօր, 2018 թ. Մայիսի վերջին, տողերուս հեղինակը կը տարուի մտածելու եւ կարծելու, թէ եօթ տարիներ առաջ իր ստորագրած չորս հրապարակագրական մարտակոչերը՝ ոչ միայն կը լսուէին ուշադրութեամբ, կ'ընդունուէին գոհունակութեամբ, կ'որդեգրուէին հաստատ յանձնառութեամբ, Արեւելահայաստանի մէջ շատ մը սրտցաւ ու յեղափոխական շունչ ու համբերատարութիւն ունեցող խումբերու կողմէ, այլեւ՝ անոնցմէ հաւանաբար երկու կամ երեքը՝ Յեղափոխութեան Նախապատրաստութեան ձեռնարկած էին: Վստահաբար այդ խումբերէն մէկն էր՝ իմաստուն Նիկոլ Փաշինեանի առաջնորդութեամբ գործող «Ելք» կուսակցութեան ղեկավար քատրը, քանի որ «Ելք»ի յեղափոխութեան հեզասահ ընթացքը, համահայաստանեան տարածքային զօրաշարժը եւ նոր դահլիճի կազմութեան մրցանշային արագութիւնը կը վկայէին՝ Նախապատրաստութեան մը, որ կ'ենթադրէ առնուազն տասնամեակի մը լուռ ու մունջ, կարգապահ ու գաղտնապահ, քաղաքական, դաստիարակչական ու կազմակերպչական երկարաշունչ աշխատանք, «Կանտիի ճախարակ»ին դանդաղ ընթացքով, փաստելու համար, որ յեղափոխութիւնը անպայման զինեալ չլլար, այլ՝ հնարաւոր է նաեւ վերը յիշուած ութն պայմաններով, այսինքն՝ «Կանտիի ճախարակ»ով:

Սակայն զգոյշ: Մենք կը գտնուինք յեղափոխութեան յաղթանակին միայն առաջին փուլին մէջ, եւ յաջորդելիք փուլերը կրնան նոյն հեզասահութիւնը չունենալ, որովհետեւ՝ եթէ այս յեղափոխութեան գլխաւոր նպատակն է՝ մենաշնորհային դասակարգի իշխանութեան վերացումը, այսինքն՝ վայրի դրամատիրական համակարգին թաղումն ու արմատախլումը երկրէն, այդ միլիառատերերու դասակարգը, որ քառորդ դար ամբողջ արմատակալած է երկրին մէջ, հեշտօրէն պիտի չիրաժարի իշխանութենէն:

Ուրեմն, մենք Հայութիւնը կը շնորհաւորենք՝ փրկութեան միայն առաջին փուլին համար...: Ներառեալ՝ այն բոլոր փառքի, պաշտօններու եւ մետալներու մուրացկան-վասակ մտաւորականները, որոնք եւս ազատագրուեցան բոլորին հետ՝ իրենց խղճի ծանր խայթէն..., եւ ասոնց ցաւակցութիւն ալ չենք յայտնել՝ իրենց պաշտած ու երկիրդած Սերժի տապալումին համար... քանի որ իրենք եւս իրօք չէին սիրեր Սերժը... այլ միայն՝ կ'երկիրդէին անկէ...:

Կը մաղթենք, որ գալիք փուլերուն մէջ, ցարդ չմասնակցողներն ալ կը մասնակցին յեղափոխութեան, եւ այդ փուլերը եւս կը փառապսակուին... յաղթանակով:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պէյրուք, 31 Մայիս 2018

Տեսակէտ

«Մի թքիր երկիր պահող աղքատների հոգուն...»



Այս յօդուածի առաջին տողերն էի գրել, ու յանկարծ հեռախօսազանգ, իմ ռուս բարեկամս Էր, Վալէնտին Վոլկովը, Մոսկուայից Էր զանգահարել. «Այն, ինչ կատարուեց ձեր փողօրիկ երկրում, հրաշքի Էր նման: Դաժան փորձութիւնների միջով անցած ձեր տաղանդաւոր ժողովուրդը կրկին ցոյց տուեց, թէ ինչի Է ընդունակ: Ես հեռուստաէկրանից հետեւում էի այդ օրերին Երեւանում տեղի ունեցող ցոյցերին ու հանրահաւաքներին ու մտածում. աշխարհում

չկայ աւելի հիասքանչ երկիր, քան Հայաստանը, որտեղ նոր ժամանակներ են հիմա...»:

Վոլկովը հիացմունքով ու խանդավառութեամբ Էր խօսում: Նրա տարերքը նկարչութիւնն Է: Հայաստանն ու Արցախը իրենց չքնաղ բնաշխարհով ոգեշնչման աղբիւր են նրա համար:

Վալէնտին Վոլկովի հետ ծանօթացայ 1991-ին՝ Ադվերանում: Աշնանային թախծոտ օր Էր: Նստել էինք դեմ-դիմաց, եւ նա իր կեանքի ողիսականն Էր պատմում: Սումգայիթեան սպանոցից հրաշքով փրկուել, հասել Էր Հայաստան: Ճանապարհներին տեսել Է հարիւրաւոր հայ գաղթականների, արիւնալի ջարդերից դուրս պրծած, սարսափահար, հեռանում էին խմբերով, գնում էին հայրենիք: Տեսել Է սովալլուկ հայ երեխաների, կիսամերկ, ցրտից սառած մանուկների ու սիրտը սեղմուել Է ցաւից: Պատմում Էր, թէ Սումգայիթում ինչպէս են իր աչքի առաջ խոշտանգել, տանջամահ արել հայերին, խարոյկի վրայ այրել, եւ նրանց օգնութեան հասնելու անգորութիւնից կիսախելագար, թողել, հեռացել Է:

Ձեռքը վիրակապի մէջ Էր, քունքի վերքը դեռ չէր սպիացել. թուրք-բարբարոսի արիւնոտ ձեռքերի հետքերը... Երբ պատմում Էր, վտիտ մարմինը ցնցւում Էր վերապրումներից: Ես ծոցատետրիս մէջ գրի եմ առել նրա պատմածները, դրանք մղձաւանջային պատմութիւններ են, որ հնարաւոր չէ մոռանալ:

Վոլկովն ընտանիքով Սումգայիթում Էր ապրում: Տարիներ շարունակ հալածանքների Է ենթարկուել Ադրբեջանի իշխանութիւնների կողմից՝ դեռ մինչեւ Ղարաբաղեան շարժումը, հողմի երախն ընկած դաշտագլոր բոյսի նման քշուել դէս ու դէն: Մինչեւ անգամ գիշերն են եկել տնից հանել ու տարել, ո՞ր մեղքի համար. պարզապէս չէր կարող անտարբեր անցնել վայրագութիւնների կողքով, որ կատարւում էին Ադրբեջանում քրիստոնէական ճարտարապետական յուշարձանների նկատմամբ: Վոլկովը աշխատանքի բերումով յաճախ Էր լինում ադրբեջանական շրջաններում, ու ամէն տեղ՝ նոյն վանդալիզմը, նոյն յանցագործ ձեռքի դաժան հետքերը. աներուած, քանդուած ռուսական ու հայկական եկեղեցիներ, դրանց կողքին սնկերի նման աճող մզկիթներ: Եւ ընդվզել Է նկարչի հոգին այդ զարհուրելի վայրագութիւնների դէմ, անարգուած, պղծուած տաճարները լուսանկարել, ուղարկել Է միութենական իշխանութիւններին, հաւատով, որ իր արդար բողոքի ձայնը տեղ կը հասնի,



սակայն՝ ձայն բարբառոյ յանապատի: Վալենտինը չի յանձնուել յուսահատութեանը, շարունակել է տագնապի զանգեր հնչեցնել: Ադրբեջանի իշխանութիւնները սկսել են հետապնդել Վոլկովին՝ նրա մէջ տեսնելով իրենց ժողովրդի ոխերիմ թշնամուն: Դաւեր էին նիւթում ոչ միայն իր, այլեւ կնոջ ու երեխաների դէմ: Սումգայիթեան նախճիրի օրերին խուժանը գիշերը յարձակուել է նրանց տան վրայ, ջարդել դուռը, ներս խուժել ու ամեն ինչ տակնուվրայ արել: Բարեբախտաբար տանը ոչ ոք չկար:

Վոլկովին մտատանջում էր Սումգայիթում թողած իր նկարների ճակատագիրը: Տան նկուղում էր թաքցրել նկարները, միայն հասցրել է ընտանիքը փրկել: Չարհուրելի բաներ պատմեց Բաքուից: Սումգայիթեան ջարդերից դուրս պրծել, մի կերպ հասել են Բաքու: Գիշերը մնացել են ազգութեամբ թաթար, իր վաղեմի ծանօթներից մէկի տանը: Նրա կինը հայուհի էր. գերեզմանափոս յիշեցնող գետնափոր հիւղակում էր ապրում, մեն-մենակ, արեւի լոյսից զրկուած: Կնոջն ամուսինն էր թաքցրել՝ խուժանի աչքից հեռու: Մարմնովս սարսուռ անցաւ, սարսափելի էր այդ ամենը...

Վոլկովից հարցրի, թէ ինչ վիճակում է Բաքուի հայոց եկեղեցին, այնտեղ շահ տեմ մոմ վառել երեխաներիս հետ...

-Ծխամած պատերն են մնացել,- ասաց, մի փոքր լռելուց յետոյ շարունակեց,- զանգը դեռ մնում էր, չկարողացան պոկել: Բարբարոսները մինչեւ անգամ եկեղեցու բակի հողն են փորել ու վառել, որ իսպառ վերանայ հայկական շունչը: Ասես մուրճով խփեցին քունքիս... Վոլկովն ասաց նաեւ, թէ երկու շաբաթ շարունակ ծխում էր հրոյ ճարակի մատնուած տաճարը: Ու հիմա էլ, գրեթէ ամեն գիշեր, տեսնում եմ վիթխարի կերոնի նման այրուող, մոխրացող տաճարի զարհուրելի պատկերը, եւ ցասումից բռնկեցւում եմ մատներս:

Դրանից յետոյ դարձեալ հանդիպումներ եմ ունեցել Վոլկովի հետ՝ արդէն Երեւանում, ամեն անգամ վայելել նրա ոգեղէն նկարներում ծփացող գոյների հրաշքը:

Վոլկովի հեռախօսագանգը Մոսկուայից անակնկալ էր ինձ համար, ու ես բաց չթողեցի առիթը, սկսեցի մտովի գրոյց բացել նրա հետ, պատմել նրան այն ամենի մասին, ինչ չեմ հասցրել հեռախօսով:

Սիրելի Վալենտին, այս մշուշոտ ու տագնապալի քաղաքական դարաշրջանում այն, ինչ կատարուեց իմ փոքրիկ Հայաստանում, ինչպէս ինքդ ասացիր մեր հեռախօսագրոյցի ժամանակ, հրաշքի էր նման: Մինչդեռ հրաշք չկար, սակայն կար երկրի ճակատագրի համար պայքարի ելած համաժողովրդական ընդվզումը, որը շիկացման էր հասել: Պատճառները շատ էին՝ տնտեսական, սոցիալական, բարոյական... Այն, ինչ կատարուեց Հայաստանում, անխուսափելի էր, կատարուեց՝ տասնամեակներով իմ ժողովրդի ոտնահարուող իրաւունքները վերականգնելու, երկրում տիրող գաղջ մթնոլորտը մաքրելու թելադրանքով: Արդարութեան ձայնն էր դա, որը պիտի մի օր ընդվզեր, գարնան կենարար անձրեւի նման սրբեր տաներ երկրում կուտակուած աղտ-աղարտը:

Սոի ու կեղծիքի, շահամոլութեան ու ընչաքաղցութեան, այս ամօթալի առուծախի բորբոսահոտ ճահիճը իր մէջ է առել ողջ երկիրը: Սասանուել էր վաղուայ օրուայ նկատմամբ հաւատը: Մարդիկ յայտնուել էին վախի, անյուսութեան ճիրաններում, եւ տագնապահար հարցնում էին. «Ինչ է սպասւում մեզ ու մեր երեխաներին, այսպէս ո՞ր ենք հասնելու...»: Նրանք չէին ուզում համակերպուել ողջախոհութիւնը կորցրած ու բարոյագրկուած, իրեն



ամբողջովին սպառած պետական կառավարման համակարգի հին գործելակերպի հետ, դառնալ նրա պատանդը: Ըմբոստացողներին սպառնալիքներով ստիպում էին լռել, հալածանքների էին ենթարկում, դարձնում քաղբանտարկեալներ: Մարդու արժեքը, նրա տեղն ու անելիքը կեանքում, որոշում էր կուսակցական պատկանելութեամբ: Ժողովուրդը յոգնել էր արդեն՝ իշխանատենչութեան մոլուցքից կուրացած, մտածողութեան նոր որակներն արհամարհող պետական պաշտոնեաների արկածախնդրութիւններից: Նրանք իրենց ամբարտաւան պահուածքով հասել էին արձանի սառնութեան, եւ հոգիներն ամայացնող այդ վտանգաւոր սառնութիւնից օր օրի սեղմում, փոքրանում էր հայրենիքը: Մարդիկ ստիպուած հեռանում էին երկրից՝ դեռ չկորցնելով վերջին յոյսը, գնում էին՝ թողնելով իրենց տները, ծննդավայրը, թանկ յիշատակները, հարազատներին ու մտերիմներին:]

Սիրելի Վալենտին, ուզում եմ անկեղծօրէն խոստովանել. երկրում տասնամեակներով գոյութիւն ունեցող այրող խնդիրներից ինձ՝ որպէս մտաւորականի, առաւել շատ մտահոգել է արտագաղթը, ազգային աղէտ է դա, ամենասահարկու արհաւիրքը փոքրիկ Հայաստանի համար: Լրագրողական աշխատանքի բերումով յաճախ եմ լինում նաեւ լքուած գիւղերում ու ամէն անգամ ցաւ եմ ապրում: Դրանք միայն լքուած, պարպուած գիւղեր չեն: Դրանք մարած օջախներ են, եղինջների մէջ դանդաղ մեռնող տներ՝ ամայի բակերով, որտեղ մեր լաւաշի, մեր թոնրահացի հոտը պիտի ծփար, երկիր պահող շինականի ձեռքերի հողահոտը: Դրանք անխնամ մնալուց չորացող ծառեր են ու վայրի դարձած այգիներ, մեռնող յիշողութիւն է, դարերի խորքից եկող մեռնող աւանդոյթներ...

Մեր նշանաւորներից մէկն է ասել. «Մի թքիր երկիր պահող աղքատների հոգուն, նրանք մի օր կարող են փակել քո տունդարձի ճանապարհը: Դա նրանց իրաւունքն է...»: Պետական միջոցները մսխող մեր իշխանաւորները թքել էին աղքատների վրայ: Նրանք չէին հասկանում, որ իրենց պաշտպանութեան զրաւը կարող է մի օր ջարդուել՝ այդ նոյն աղքատների ձեռքով: Այդպէս էլ եղաւ...

Խորապէս համոզուած եմ. եթէ թաւշեայ յեղափոխութիւնը չաղթանակէր, երկրում տիրող ճղճիմ մթնոլորտը նոր արհաւիրքներ կը բերէր իմ ժողովրդին: Պետք է ասել, որ յեղափոխութեան իրականացմանը իր մեծ նպաստը բերեց երիտասարդութիւնը, մեր անկախութեան սերունդը, արժանապատուօրէն յաղթած սերունդը: Նա քաջ գիտակցում էր, որ պահը ճակատագրական է, եւ երկրի առաջաւոր ուժերի հետ մէկտեղ պայքարի ելաւ: Երիտասարդութիւնը գործում էր ողջամիտ, համախումբ՝ չխախտելով սահմանադրական օրէնքները, պահպանելով բարոյականութեան նորմերը: Նայում էի գարնանային Երեւանի փողոցներով խրոխտ քայլերթով անցնող ջահել տղաներին ու աղջիկներին եւ հպարտութեամբ էի լցւում: Այո, Աշխարհում ամենագեղեցիկ բանը երիտասարդութեան կենարար ուժն է: Համաժողովրդական շարժման շիկացած օրերին մարդկանց ոգին բարձրացնող քայլերգերը այդ ուժի գորութեամբ ծնունդ առան, որ թաւշեայ յեղափոխութեան յաղթանակի դոյանջներն էին տանում հասցնում հեռաւոր ափեր, նրա վեհութիւնն ու հմայքը: Երեւանում ծաւալուող իրադարձութիւններով ոգեշնչուած, ես վերստին համոզուեցի, որ պայքարում են նաեւ երգով. լինում են պահեր, երբ երգն աւելի զօրաւոր է, քան ամենասահարկու զէնքը:

Սիրելի Վալենտին, երգը միշտ էլ իմ ժողովրդի սուրն է եղել՝ կոփուած ազատագրական ոգու կրակից: Համաժողովրդական շարժման օրերին ես տեսայ, թէ այդ սրբազան կրակից



բռնկուած խօսքը ինչպիսի՜ ազդեցութիւն կարող է ունենալ հոծ բազմութեան վրայ: Վիթխարի ու զորեղ Էր շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինեանի կրթոտ, զգացմունքային խօսքը: Երկրում տիրող անօրինականութեան, ստի ու կեղծիքի մթնոլորտը մաքրելու կոչ Էր դա: Ինձ հիացնում Էր նրա անձնական արիութիւնը, զուսպ, հանգիստ, ասպետական պահուածքը: Մարդկանց յիշողութեան մէջ ընդմիշտ կը մնան յուզիչ պահերն այն, երբ նա փորձում Էր ճեղքել փշալարերի պատը. ինձ թուաց, թէ շունչս կտրուում Էր. «Ո՛րժ տուր, օգնի՛ր նրան...», խնդրում Էի Աստծուն: Այդպէս կարող է անել յանուն հայրենիքի ինքնազոհաբերման պատրաստ զինուորը: Երբ հեռախօսով զրուցում էինք, ասացիր. «Ձեր համաժողովրդական շարժման առաջնորդը արժանի է այն մեծ ու հերոսական ժողովրդին, որի զաւակն է ինքը», լիովին համաձայն եմ քեզ հետ: Դեռեւս շարժման առաջին օրերին մարդիկ ոգեւորութեամբ էին դիմաւորում նրան՝ Գիւմրիից Երեւան քայլերթի ժամանակ, հաւատով բացում իրենց հոգին: Սիրոյ, միասնութեան մի վեհ քայլերթ Էր դա, որը շատ մեծ խորհուրդ ուներ իր մէջ: Բնակավայրերից մէկում, ցուցարարների մէջ կանգնած մի կին փաթաթուել Էր շարժման առաջնորդին, իր մայրական անհուն սերն ու գորովն Էր տալիս նրան: Աչքերում գոյացած արցունքի մաքուր շիթը ողողել Էր կնճիռներով ակօսուած դէմքը. առօրեայ հոգսերի ծանր բեռն ուսերին առած, տանջուած, բայց չկոտրուած հայ կնոջ դէմք Էր դա, որ երբեք չեմ մոռանայ...

Յօդուածիս վերջին տողերն Էի գրում, երբ հնչեց դռան զանգը, հարեւանս Էր, դէմքին բերկրանքն Էր շողում: Ինձ հրաւիրեց իրենց տուն՝ միասին նշելու Արաբական Միացեալ Էմիրութիւններից որդիների վերադարձը: Դաժան ճակատագրի բերումով օտար ափերում բախտ որոնող իմ հայրենակիցներից շատերն են այսուհետ վերադառնալու Զայաստան՝ ընդմիշտ, գալու են, որ շէնացնեն տարիներով անմշակ թողած հողը, իրենց եղբայրների ու քոյրերի հետ հզօրացնեն ու դրախտավայր դարձնեն երկիրը: Գալու են, քանզի թաւշեայ յեղափոխութիւնը, որ իմ երկրի դարաւոր պատմութեան տարեգրութեան փառաւոր էջերից է, բացեց տունդարձի ճանապարհները:

Ու հիմա ես իմ փոքրիկ Զայաստանում խորապէս զգում եմ լիարժէք մարդ լինելու երջանկութիւնը, այդ մեծագոյն վայելքը յեղափոխութիւնն է պարգեւել: Զիմա ես չեմ վախենում սառնաշունչ հողմերի քմահաճոյքներից, որովհետեւ երկրի դէկը ամուր ու յուսալի ձեռքերում է, երկիր, որտեղ ազատութեան թարմ շունչն է թւածում, եւ խաղաղ են բացուող առաւօտները:

ՍԵՐժ ԱՌԱՔԵԼԵԱՆ

«Առաւօտ»

02.06.2018

(Ուղղագրութեան փոփոխութիւնը՝ Ազատ Խօսքի)

Տեսակէտ

Հայանուն Փաշաներ Կ'ամբողջացնեն...Թորքին Գործը

Փակելով Սփիւռքահայ Դպրոցները

Բարգէն Պոյաճեան, Ճարտարապետ,

Թորոնթօ, 15 Յունիս 2018



Երուանդ Տեմիրճեան Նախակրթարան

Տարի մը առաջ պատրաստուած ներքոյիշեալ յօդուածը որոշած էի չիրատարակել, բայց ի տես Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան մանչերու ու Դարուիի Յակոբեան աղջկանց եկրորդական եւ Լեւոն Նազարեան Նախակրթարան վարժարանները փակելու որոշումներուն՝ հարկաւոր է ահագանգել որ այս

կարգադրութիւնները արեւմտահայերէն լեզուին վերացման վերջին քայլերն են եւ ընդհանրապէս սփիւռքի հոգեվարքի նախանշանները:

Տարիներ առաջ հայերէնի ուսուցիչս գրած էր թէ «Անապատի մէջ ուղտերը շատ շուտ կը զգան անազամորիկի յառաջխաղացքը եւ կը կքին՝ զգուշացնելով վտանգին մօտենալէն»:

Իրավիճակը նոյնն է մեզի համար այսօր. անազամորիկը կը մօտենայ սփիւռքի հայկական դպրոցներուն: Ժամանակն է ահագանգելու, քանի դեռ կը յուսամ որ կրնանք բան մը բարեփոխել:

Ըստ ուսումնասիրութիւններու եւ հաւաստի տեղեկութիւններու, վերջին 45 տարիներուն սփիւռքի մէջ գոցուած են երկու հարիւրէ աւելի ամենօրեայ հայկական դպրոցներ: Օրինակ, լիբանանահայ եւ պոլսահայ դպրոցներուն թիւը այդ տարիներուն կէտով պակսած է, իսկ անոնց աշակերտութեան թիւը պակսած է երկու երրորդով:

Փորձեմ յիշեցնել փակուած դպրոցներէն քանի մը հատին անունները.

- 1- Հ.Բ.Ը.Մ.ի Դանիէլ եւ Ալիս Չարուկեան վարժարանը – Թորոնթօ,
- 2- Հ.Բ.Ը.Մ.ի Մելգոնեան կրթական հաստատութիւնը – Նիկոսիա,
- 3- Թ.Մ.Մ.ի Արշակ Տիգրանեան վարժարանը – Լոս Անճելոս,
- 4- Սուրբ Խաչ Ազգային ամենօրեայ վարժարանը – Թորոնթօ:



Ասոնց անելցնենք Հ.Բ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի վարժարանները: Ամբողջ Լատինական Ամերիկայի մէջ մնացեր է Հ.Բ.Ը.Մ-ի ընդամենը մէկ վարժարան...

Անուններուն շարքը երկար է: Հետաքրքրական է եւ նոյն ատեն՝ շատ տխուր, որ գոցուած դպրոցներուն զգալի մասը վայելած է Հ.Բ.Ը.Մ-ի հովանաւորութիւնը: Միութեան՝ ամէն ինչ նիւթականով չափող պատասխանատուները զայն դարձուցած են հայ չարագործներու ամերիկեան միութիւն... Բարեբախտաբար, կան պետութիւններ, որոնք անդրադարձած են հայութեան դէմ լարուած դաւին եւ արգելք հանդիսացած իրենց երկիրներու հայկական դպրոցներու կասկածելի առքուվաճառքին: Այդ ՕՏԱՐ պետութիւնները յայտնաբերած են որ Հ.Բ.Ը.Մ-ի պատասխանատուները ուրիշ բան չեն եթէ ոչ խաչագողեր, որոնց կը հետաքրքրեն միայն իրենց քսակները:

Բերեմ Պէյրութի օրինակը. Հ.Բ.Ը.Մ-ի Երուանդ Տեմիրճեան Վարժարանը մօտ 25 տարի առաջ վաճառուեցաւ շատ աննշան գումարով: Յետոյ երեւան եկաւ, որ միայն մէջի կահոյքը – գնորդին նուէր ձգուած – ունէր վաճառուածին արժէքը: Աւելի մեծ խայտառակութիւնը ան էր, որ դպրոցը ծախելով գումարը գրպանելու իրենց աճապարանքին մէջ, Հ.Բ.Ը.Մ-ի անխելք եւ ազահ պատասխանատուները մոռցած էին նաեւ դպրոցին բացման առթիւ Վազգէն Ա. Կաթողիկոսին նուէր դրկած մեծ խաչքարը՝ հայերէն արձանագրութեամբ: Շաբաթներ յետոյ երբ այդ անխելքներէն մէկը ասիկա կը յիշէ, կը ներկայանան գնորդին՝ իսլամական «Մաքասետ» միութեան ղեկավարութեան եւ խաչքարը կը խնդրեն: Իսլամները կը մերժեն, ըսելով, թէ իրենց համար այդ խաչքարը արուեստի գործ մըն է, ու կը յիշեցնեն որ առքուվաճառքին համաձայնագիրը ստորագրուած էր վերջնական կերպով եւ կողմերը իրարու տալիք կամ առնելիք ոչինչ ունէին: Ականատեսներ կ'ըսեն, թէ իսլամ լաչակաւոր աղջիկներու դպրոցի վերածուած հայկական երբեմնի այդ դպրոցի մուտքին դռն կանգնած կը մնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսին այդ խաչքարը՝ նուիրաբերման արձանագրութեամբ... «Թուրքը անցաւ հոսկէ» արտայայտութիւնը շատ կը յարմարի այս պարագային, այն տարբերութեամբ, որ մեր օրերու թուրքերը հայկական անուն կը կրեն եւ Հ.Բ.Ը.Մ-ի անունով հանդէս կու գան:

Ե՞րբ պիտի կարողանանք «Ալ կը բաւէ» ըսել այս խաչագողներուն, որոնք անուններով ծանօթ են բոլորին եւ որոնք կը վարեն ղեկավար պաշտօններ մեր համայնքներուն մէջ:

Որպէսզի հողային պահանջատիրութեան պայքարը շարունակենք, սփիւռքի մէջ պետք ունինք նոր, երիտասարդ ոյժերու, որոնք հայրենասիրական շունչով կը դաստիարակուին այս դպրոցներուն մէջ: Երբ այս դպրոցները կը փակուին՝ այդ սերունդները ինքնաբերաբար կը յաճախեն օտար դպրոցներ եւ կը կազմաւորուին որպէս օտարամոլ երիտասարդներ, որոնց մօտ կը բացակայի հայրենասիրութեան ոգին, երբեմն՝ անոնք նոյնիսկ արհամարհանքով կը լեցուին ամէն հայկականի հանդէպ... Ներողութիւն, սխալեցա՛յ. չմոռնամ ըսել, թէ այդ ոգին դռն կայ: Այո՛, կա՛յ այդ ոգին, բայց տարուան մէջ միայն մէկ օր՝ 24 Ապրիլին, երբ ազգիս ղեկավարները, կաթողիկոսները եւ փաշաները յանկարծ կը յիշեն Հայկական Հարցը եւ պահանջատիրութիւնը, իսկ ուժացած կամ կիսաձուլուած հայ երիտասարդ-երիտասարդուհիները ցոյցեր կ'ընեն՝ փիքնիքի երթալու պէս բան մը...

Սփիւռքի մէջ հայօրէն գոյատեւելու արմատը, նոր սերունդներ պատրաստելու հիմնական վայրը հայկական դպրոցն է: Քանի մը տասնամեակ այսպէս շարունակուելու պարագային, Հայկական Հարցն ալ պիտի չմնայ: Ամօթ կը զգամ Մեծ Եղեռնէն 100 տարի ետք այս թեմայով խօսիլը, բայց դառն իրականութիւնը կը ստիպէ այլեւս չլռել ու պոռթկալ:



Մեր ազգին փաշաները ընտրած են ջայլամի քաղաքականութիւնը՝ գլուխին պահելով աւագի մէջ՝ ձեւացնել որ ամէն ինչ լաւ ընթացքի մէջ է: Իրենց տեսանկիւնէն, այո՛ր, ամէն ինչ լաւ է, քանի որ դէպի իրենց գրպանները նիւթական հոսքը կը շարունակուի առանց ընդմիջման: Իսկ եթէ առարկողներ պատահին՝ անոնց բերանները կարելի է փակել թիթեղէ մետալներով: Մեր փաշաներուն ու անոնց հայաստանցի կեր ու խումի ընկերներուն քով սովորական երեւոյթ եղած է մետալ բաժնելը: Ամէն օր սունկի պէս կը բուսնին զանազան անուններով շքանշաններ ու մետալներ, նոյնիսկ մեր թաղին նպարավաճառը սկսած է մետալներ պարգեւել իր մշտական յաճախորդներուն: Կար ժամանակ, երբ մետալները փառք ու պատիւ էին արժանաւոր թեկնածուներուն համար, որոնք զանոնք կը վաստակէին տասնամեակներու տքնաջան աշխատանքով. օրինակ՝ հայերէնի մեր ուսուցիչը՝ Օննիկ Սարգիսեանը 1986-ին արժանացաւ Խորհրդային Հայաստանի Լուսաւորութեան Նախարարութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»՝ այդ տարուան ՄԻԱԿ մետալին՝ իբրեւ տասնամեակներու մանկավարժական վաստակ ունեցող նուիրեալ: Ցաւօք հիմա մետալ-շքանշան-պատուոգիրները եւ նման բաները դարձած են մարդոց լռութիւնը կամ քծնանքը գնելու միջոց մեր փաշաներուն համար՝ ստրկացնելով այդ սուտ եւ կեղծ պարգեւները ստացողները, ապահովելով անոնց լռութիւնը օրէ օր ահագնացող վտանգին դիմաց, երբեմն ալ զանոնք մղելով ծափահարելու իրենց ազգադաւ արարքներուն:

Այսօր սփիւռքը եւ սփիւռքահայ դպրոցը կը գտնուին ողբալի վիճակի մէջ: Լաւ եւ գովելի է դպրոց կառուցելը, բայց աւելի լաւ է երբ այդ շէնքը կառուցելը լաւապէս մտածուած եւ ուսումնասիրուած է, նկատի առնուած են շրջանի հայ բնակչութեան թիւը, հայ ընտանիքներուն աճի եւ ուրիշ բնակավայրեր տեղափոխուելու միտումները: Ի՞նչ իմաստ ունի Նոր դպրոցաշէնք կառուցել եթէ Նոր դպրոցին դասարանները պարապ պիտի մնան կամ պիտի լեցուին ... ոչ-հայ աշակերտներով: Ասոր լաւագոյն օրինակը կու գայ Լիբանանէն, ուր անցեալ տարուան Նոյեմբերին ազգային իշխանութիւններու կառուցած «Ազգային միացեալ վարժարան»ին բացումը կատարուեցաւ մեծ աղմուկով ... առանց աշակերտի: Ըստ ազգ. իշխանութեանց յայտարարութեան, դպրոցը 2017-2018 ուսումնական տարին պիտի սկսի գործել: Արդեօք ճիշդ պիտի չ'ըլլա՞ր նախ կառուցել փոքր, բարենպաստ գիներով ու վճարման պայմաններով բնակարաններ եւ քաջալերել հայ երիտասարդ-երիտասարդուհիները ընտանիք կազմելու եւ քանի մը երեխայ ունենալու, որպէսզի անոնք լեցնեն այդ դպրոցին դասարանները եւ ոչ թէ յենիլ գործող թաղային դպրոցներու աշակերտութեան թիւին վրայ, պատճառաբանելով թէ քանի մը դպրոց Նոր, մէկ դպրոցի մը երդիքի տակ միաւորելով զգալի խնայողութիւն կ'ըլլայ...

Հարկաւոր է փսփսալ մեր ազգային փաշաներու ականջներուն, որ ժամանակն է բանալու քսակները եւ հարցին մօտենալու ոչ-շահաբերական ակնկալութիւններով: Հարուստներուն հետ մեր փորձը շատ դառն է. մօտիկ անցեալին երբ կարելի էր թուրքերէն տասնապատիկ արժէքով գնել այն ինչ մերն էր եւ ընդարձակել մեր երկիրին սահմանները, մենք նման խելամտութիւն չցուցաբերեցինք մեր հարուստներու անտարբերութեան եւ անձնակեդրոնութեան պատճառով, իսկ թուրքը յաջողեցաւ իր հարցերը լուծել՝ նաեւ մեր հարուստներու մեծ մասին այդ պահուածքին շնորհիւ:

Պարոնայք աղաներ, Էֆենտիներ, պէյեր եւ փաշաներ, ամէն տարի ձեր թելեթոններով միլիոնաւոր գումարներ կը հաւաքէք եւ այդ գումարներով կ'օգնէք Հայաստանի եւ Արցախի



հանրապետութիւններուն (թէեւ այդ ալ հարցական է): Ինծի համար անհասկնալի է՝ եթէ Հայաստանի Հանրապետութիւնը պետականութիւն ունի, անոր ղեկավարներուն պարտքն է հոգալ քաղաքացիներուն կարիքները եւ բարելաւել անոնց կենսապայմանները եւ ոչ թէ պարարտացնել ... Մոնթե Գարլոյի գազինօներուն եկամուտները:

Հարկաւոր է նաեւ որ հայ դպրոցին նկատմամբ հայ ծնողներուն վերաբերմունքը ըլլայ պատշաճ, անոնց նկատմամբ մօտեցումը՝ հոգատար եւ կարեկից: Հայ ծնողները հայ դպրոցին մէջ պէտք է տեսնեն իրենց զաւակներուն ապագային կերտումը: Անոնք տգիտութեամբ պէտք չէ իրենց ցանկութիւններն ու քմահաճոյքները փորձեն պարտադրել դպրոցներու պատասխանատուներուն: Վերջիններուն դիմաց պէտք չէ իրենք զիրենք դնեն առիծի տեղ, մինչդէռ կատու կը կտրին իրենց զաւակներուն յաճախած օտար դպրոցներու պատասխանատուներուն դիմաց:

Սփիւռքի դրամը պէտք է մնայ սփիւռքի՝ մէջ, փաշանէր, եւ օգտագործուի սփիւռքի՝ կարիքներուն համար, այս պարագային՝ սփիւռքահայ դպրոցներու գոյատեւման համար: Արեւմտեան Հայաստանի հողային պահանջատիրութեան գլխաւոր իրաւատէրը սփիւռքահայութիւնն է: Կրկնեմ՝ մեր իրաւունքներուն վերատիրանալու համար պէտք ունինք հայրենասիրական ոգիով դաստիարակուած նոր սերունդներու: Որպէսզի մեր Մեծ Երազը իրականութեան վերածենք, հարկաւոր է, որ ազգին փաշաները, կաթողիկոսները եւ մեծ ու փոքր չափի խաչագողերը հասկնան, որ ժամանակն է այդ դրամահաւաքներու գումարներով սփիւռքի մէջ ստեղծելու ձրի դպրոցական ցանց մը, որով բոլոր սփիւռքահայ երեխաները հնարաւորութիւն ունենան իրենց կրթութիւնն ստանալու այդ մատչելի հայկական դպրոցներուն մէջ:

Անշուշտ հոս չմոռնանք հայ ուսուցիչին արժանավայել վարձատրութեան հարցը եւ ոչ թէ անոր ողորմութիւն շնորհել ... մեծահոգաբար:

Աւագամրրիկի վտանգը կը մօտենայ սփիւռքահայ դպրոցներուն եւ կը ծեծէ անոնց դարպասները:

Արդեօք պատրա՞ստ էք, փաշանէր, իրականացնելու սփիւռքահայ կրթական ձրի համակարգը, թէ՞ նորէն պիտի նախընտրէք ջուր ծեծել...

Գրական-Մշակութային

ՓՈԻՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատութի՛ն, շողացիր դու՛ն

արեւափայլ

Կեանքիս բոլոր ճամբաներուն

մրրկահար...

Մերթ դու՛ն դարձար անհա՛ն թռչուն,

կապո՛յտ երազ

Մերթ ալ՝ անչափ մօտիկ ինձի

զերթ սրտիս զարկն...

Ափերս միշտ քե՛զ երկարած

ես ապրեցայ

Շունչս շունչե՛դ միշտ կեանք առաւ

լուսավարար...

Եւ ես գիտցայ որ դու՛ն մընաս

յար աննուա՛ճ

Ծարաւովդ ես տոչորի՛մ

կեանք մը համակ

Վերստեղծեմ քու պատկերդ



անմահական

Եւ այդ տենդով ու այդ տենչով

մնամ ազա՛տ...

ԵՐԱՆ

.....

ԻՆՏԻ ԿԸ ԹՈՒԻ

Բառ ու տողեր անչափ շատ են

Բայց սիրտ գերող խօսքը չկայ...

Գոյն գոյն ծաղիկներ կան պէսպէս

Բայց հոտեւան բոյրը չկայ...

Ինճոյք, խրախճանք Է ամէն տեղ

Բայց խնդութիւնն Է նուազեր...

Ընկերներ կան շատ, անհամար

Բայց սիրտէ սիրտ կամար չկայ...

Մարդն առանձին կը տագնապի

Իր ցաւերուն հետ մեն-մենակ...

Արդեօ՞ք ամէն բան փոխուեր Է

Թե՞ լոկ ինծի թուի այդպէս...

ԵՐԱՆ

.....

ԺՊԻՏՆԵՐՈՒ ԾՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ժպիտներու ծո՛ւկ, Հայաստա՛ն

Յոլա՛, շողա՛ դուն յաւիտեան



Ազատութիւնն նուաճեցիր
Կամքով հզօր, արիասիրտ...
Միասնական պայքարդ բո՛րբ
Պսակուեցաւ յաղթանակո՛ւմ
Ակնթարթ մ'էր հայ պատմութեան
Որ վերյառնեց յաւերժաբար..
Ազատ Հայկի ոգին արի՛
Վերընծիւղեց հըրաշալի՛
Մտաւ մէն մի հայորդիին
Սրտի՛ն, մտքի՛ն ու հոգի՛ին
Անպարտելի ոգի դարձաւ
Հաւաքական, միասնական
Նոր էջ բացաւ հին պատմութեան
Որ պիտ' ապրի յար յաւիտեան:
ԵՐԱՆ

.....

ԻՆՁՄԷ ՊԻՏԻ ՄՆԱՆ
Ինձմէ պիտի մնան գուցէ
Տողեր ցրուած ասդին-անդին
Ուր դեռ հոգիս պիտ' ճաճանչէ...

Ինձմէ պիտի մնան յուշեր
Սիրողներուս սրտերուն մէջ
Որոնք պիտի լուռ առկայծեն...

Ինձմէ պիտի մնան հեւքեր
Որոնք չառին բառի հանդերձ
Օդին մէջ լուռ պիտ' մրմնջեն...



Ինձմէ երազ մը պիտ' մնայ
Որ դեռ մարմին պիտի հագնի
Յետնորդներու գալիքին վառ:
ԵՐԱՆ

.....

ԼՈՅՍ ԶԱՂԵՑԻ

Լոյս քաղեցի կեանքիս հազար
ճամբաներէն
Լոյս քաղեցի ցաւէս, խիստէս
ու տազնապէս
Յամբոյրներէն, ժպիտներէն
երազներէն
Յայեացքներէն, բարեւներէն
բիւր խօսքերէն
Եւ հասկցայ թէ մութն անգամ
խաւարամած
Լոյսի կարօ՛տ, լոյսի տենչա՛նք
Էր ցաւատանջ
Եւ զգացի թէ չարն անգամ
սիրտով դաժան
Բարութեան լոյս տենչար ահով
ու տենդահար
Ըմբռնեցի թէ լոյսն իրօք
ամէն տեղ Է
Թէ սրտիդ մէջ դուն զայն կրես
սիրտով անեզր
Թէ փայփայես սիրով անեղծ



կարօտահեւ

Չայն արարես վարքով, բարքով

անշեղօրէն:

ԵՐԱՆ

.....

ԼՌՈՒԹԵՆԵՍ ԲԱՌԵՐ ԶԱՂԵՄ

Լռութենէս բառեր քաղեմ

Բառերովն այդ տողեր հիւսեմ

Լոյսի շիթեր հոսեցընեմ

Թող պսպղան մթութեան մէջ...

Մէյ-մէկ աստղեր անոնք դառնան

Ջահավառէն երկինքս մառ

Բառերովս սիրտս ցոլայ

Բառերովս ես զիս կարդամ...

Բառ-աստղերս պիտի կրնամ

Հոգւոյս անհունն քօղազերծել

Անոնք ինչպէս վտիտ մոմեր

Պիտ' նշուլէն ցուրտ ճառագայթ

Մինչ անհունը հոգւոյս, սրտիս

Պիտի հեւայ լռութեան մէջ

Ինչպէս շունչը Արարիչին

Անհունամեծ տիեզերքին մէջ..

ԵՐԱՆ

.....

ԱՆՄԱՐ ԿԱՐՕՏՈՎ

(Հայրերու տօնին առթիւ)

Խօսքդ մնաց պատգամ որպէս

Հա՛յր իմ բարի ու սիրազեղ..



-Դուն մեր լեզուն պիտի սորվի՛ս-

-Չայն փայփայէ՛ս զերթ զանձ անգին-

Եւ երբ յոգնած տուն կու գայիր

Ձեռքիդ թերթն էր հայաբարբառ

Կը կարդայիր շունչով անյագ

Կարծես անկէ ոյժ քաղէիր...

Խօսքդ դարձաւ ինձ պատուիրան

Կեանքդ վսեմ՝ վառ օրինակ

Վարք ու բարքդ ջի՛նջ, անբասի՛ր

Չիս ներշնչեն պահին փորձիչ..

Կերպարդ լո՛յս ինձ հետեւի

Հսկէ վըրաս՝ չսայթաքիմ

Արդարութեան կանչ կը դառնայ

Ճշմարտութեան փարոս անմար..

Խիղճդ արդար կը ղօղանջէ

Անլռելի զանգ մը որպէս

Աղմուկին մէջ ու ժխորին

Աստծոյ ձայնն է բիւրեղ ու ջինջ:

ԵՐԱՆ

.....

ՇՆՈՐՀԷ՛ ՌՎ ՏԵՐ

Կեանքիս համար իմ բովանդակ

Չեմ ուզեր ես գահ ու գանձեր

Տուր ինձ դալար գրիչ, ո՛վ ՏԵՐ



Երկնեմ տողեր ես մեծասքանչ....

Շնորհէ, ո՛վ Տէր, տանջանքն այն սուրբ

Որով պեղեմ հոգիս անափ

Գտնեմ զանձեր այնտեղ պահուած

Հանեմ զանոնք աշխարհին լոյս....

Մենութեանս մէջ մտերիմ

Անոնք խռովեն սիրտս, հոգիս

Լոյսն արեւին անոնք տենչան

Ընթերցողին սեր-գորովանքն....

Գթա՛ր ինձ, Տէ՛ր, եւ մի՛ թողուր

Ծուլեն-ծուլեն ամպերն հոգւոյս

Խտանան ու կապար դառնան

Սիրտս սեղմեն յար հոգետանջ....

Թող անձրեւեն ամպերն մռայլ

Օրհնութի՛ւն, յո՛յս ու լո՛յս դառնան

Գուցէ անձրեւն այդ բիւրեղեայ

Նոր մաքրութեամբ օծէ աշխարհն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ


Գրական-Մշակութային

Մխիթարեան Միաբանութիւն

300-ԱՄԵԱՅ ԼՈՅՍ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Մխիթարեան Միաբանութեան մշակութային վաստակը

1700-2005



Մխիթար Վրդ. Սեբաստացի Աբբահայրը (1676-1749) եղաւ այն փայլուն եւ կարող աստղերէն մին, որ հայոց երկնակամարին վրայ փայլեցաւ:

Մխիթար ԾՐԱԳԻՐ մը դրած էր իր կեանքին, հիմնելով իր Միաբանութիւնը: Ան կ'ուզէր վերականգնել իր ազգին Մշակոյթը, Լեզուն, Պատմութիւնը, Ծեսն ու Հաւատքը, Գիրն ու Գրականութիւնը:

Նախախնամութիւնը զինք նետած էր Վենետիկի լճակին խաղաղ մէկ անկիւնը, ուր կ'ապրէր բարգաւաճ հայ գաղութ մը եւ ուր ան կ'առանձնանայ իր աշակերտներով,

փոքր կղզեակի մը մէջ, որ ժամանակի ընթացքին պիտի դառնար լոյսի փարոս մը Հայութեան համար, հեռու իր պաշտելի Հայրենիքի հողէն, ուր հարստահարիչ օտար պետութիւններ եւ աւազակախումբեր, ժամանակի ընթացքին մոխիրի պիտի վերածէին գիւղերն ու քաղաքները, եկեղեցիներն ու վանքերը եւ հոսկ ամբողջ ցեղը սպանդի պիտի առաջնորդէին Միջագետքի անապատներուն մէջ:

Մխիթար Վարդապետի ծրագիրը, ընդհանուր գիծերու մէջ, կարելի է տասը նիւթերու բաժնել.

1. ԼԵՃՈՒԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԺԸ. դարու սկիզբը, հայերէն լեզուն այնքան աղճատուած էր օտարաբանութիւններով, եւ Մխիթարի նման մեր նախնեաց գործերուն ընթերցող մը անհանդուրժելի կը գտներ կացութիւնը եւ ինչպէս կը գրէ իր կենսագիրը՝ Հ. Յ. Թորոսեան. «Ան ունեցաւ գաղափարը մեր հին, դասական լեզուն վերականգնելու»:

Առաջին գործը որ ան հրատարակեց, եղաւ «Քերականութիւն գրաբար լեզուի»:

Առանց լեզուական վերանորոգութեան, մշակութային վերածնունդ չէր կրնար տեղի ունենալ: Այս պատգամը, որպէս կտակ ընդունուած իր աշակերտներէն, զիրենք մղեց ամեն ջանք թափելու իրենց Հիմնադրին ծրագիրը իրականացնելու համար:



Լեզուական վերանորոգումին մեծապէս նպաստեց Մխիթարի պատրաստած Հայկազեան Բառարանը, որ ԺԸ. դարու մեծագոյն իրագործումը եղաւ:

1837ին Հ. Գաբրիէլ Աւետիքեանի, Հ. Խաչատուր Սիւրմէլեանի եւ Հ. Մկրտիչ Աւգերեանի աշխատանքով, հրատարակուեցան Նոր Հայկազեան Բառարանը: Ասիկա արդէն պետական ակադեմիայի մը վայել գործ էր, Հ. Աճառեանի կարծիքով, հայ լեզուի ամենէն կատարեալ բառարանն է»:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ – ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մխիթարեան Վարդապետներու հսկայ վաստակը, անոնց վիճակագրական, տեղագրական, աշխարհագրական եւ պատմական անթիւ հրատարակութիւններով, հայ ժողովուրդին պատմական յիշողութիւնը վառ պահեց, երեք դար շարունակ Նոր սերունդներուն փոխանցելով Հայրենիքի եւ ազգային արժէքներուն գիտակցութիւնը:

Անոնցմէ առաջինը կը հանդիսանայ Հ. Միքայէլ Զամչեան (1738-1823), իր եռահատոր «Հայոց Պատմութիւն» կոթողային աշխատանքով:

Հ. Ղուկաս Ինճիճեան (1758-1833), իր կարգին, կը կատարի անփոխարինելի աշխատանք մը, ձեռնարկելով ազգագրական-վիճակագրական գիտարշաւներու, պատմական Հայաստանի բոլոր տարածքին վրայ, որուն արդիւնք կ'ըլլան կարեւոր զոյգ աշխատասիրութիւններ. «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» եւ «Հնախօսութիւն Հայաստանեայց Աշխարհի» ինչպէս նաեւ Գերպ. Ագոնցի հրատարակած «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» շարքին առաջին հատորը «Հայաստան»:

Ինճիճեանի աշխատութիւնը կը շարունակեն բազմաթիւ ուրիշ Մխիթարեան վարդապետներ, որոնց մէջ յիշատակութեան արժանի են Հ. Ներսէս Սարգիսեան (1800-1866), իր «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս» հատորով, մանաւանդ Հ. Ղեւոնդ Ալիշան (1820-1901), որ բացառիկ երեւոյթ մըն է հայ իրականութեան մէջ:

Նուազ բեղուն, բայց Նոյնչափ օգտակար երկերու հեղինակ են Հ. Մանուէլ Զաջունի, Հ. Գաբրիէլ Այվազովսկի (մեծ նկարիչին եղբայրը), Հ. Ագոնց, Հ. Մինաս Բժշկեան, Հ. Յակոբոս Իսաւերտեց, Հ. Միքայէլ Յովհաննեսեան, այս վերջինը հեղինակ Հայաստանի եւ Կիլիկիոյ բերդերու կոթողային աշխատանքին:

Մասնաւոր յիշատակութեան արժանի են Հ. Համազասպ Ոսկեանի ուսումնասիրութիւնները, նուիրուած Հայաստանի բոլոր նահանգներու վանքերուն եւ եկեղեցիներուն:

3. ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԾԻՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Մխիթար Վրդ. համոզուած էր, որ եթէ Հայ ժողովուրդը հեռանայ իր նախնիքներու հաւատքէն, դատապարտուած է կորսնցնելու իր էութիւնը կազմող տարրը, իր նկարագիրը:



Հարկ էր լուսաւորել ժողովուրդը կրօնաբարոյական գործերու հրատարակութիւններով, հրատարակել Աստուածաշունչը եւ բաժնել ժողովուրդին, մեկնաբանել Աւետարանը, Յայտնութեան գիրքը, թարգմանել Մեծն Ալպերտի Աստուածաբանութիւնը... եւ այլն:

Միսիթարի յաջորդները սկսան ընդլայնել աստուածաբանական եւ հայրախօսական գործերու հրատարակութիւնը: Հայր Զամչեանի «Վահան Հաւատոյ»ն, օրինակ, ջատագովութիւնն է Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատքի ուղղափառութեան:

Հ. Գաբրիէլ Աւետիքեան եւ մանաւանդ Հ. Մկրտիչ Աւգերեան կը մտնեն զուտ հայկական անդաստանէն ներս, առաջինը մեկնաբանելով Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթքները, ճառերը եւ Հայ Եկեղեցւոյ շարականները, իսկ Աւգերեան կը հանդիսանայ եկեղեցական պատմութեան Զամչեանը, 1167 էջեր կազմուած «Լիակատար Վարք Սրբոց»ը հրատարակելով, ուր ընդգրկուած են Հայաստանեայց Եկեղեցւոյ տօնացոյցին բոլոր սուրբերը:

4. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ

Հայկական այբուբենի ստեղծումին (Ե. դար) անմիջապէս յաջորդած ըլլալով բացառիկ աշխուժութիւն մը թարգմանուած եւ ինքնագիր գործերու, Վենետիկի եւ Վիեննայի զոյգ վանքերուն մէջ խնամքով հաւաքուած եւ պահուած հազարաւոր ձեռագիր մատեանները կը պարունակէին հայ ժողովուրդին մշակութային գանձերը, որոնք հարկ էր հրատարակել եւ ժողովուրդին ծանօթացնել: Գործ մը որ ծրագրուած ձեւով տեղի ունեցաւ եւ հերթականութեամբ լոյս տեսան ա) հայ պատմիչները, բ) հայրապետները, գ) հեթանոս եւ քրիստոնէայ աշխարհի մեծ հեղինակները. հրատարակութիւններ որոնք կը սկսին ճոխացնել հայ ընտանիքներու գրադարանները եւ մեծ ծառայութիւն կը մատուցանեն գիտական աշխարհին:

5. ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հիմնականօրէն Հ. Բագրատունին է որ լայն չափով մտցուց յոյն-լատին եւ եւրոպական մեծ ազգերու գրական գլուխ-գործոցները մեր մէջ, սորվեցուց գեղեցիկ արտայայտութեան ձեւերը, խնամել ոճը, դնել արուեստ, չափակցութիւն գրուածքին մէջ:

Դասական շարժումի միւս մեծ դէմքը կը հանդիսանայ Գերայ. Եդուարդ Հիւրմիւզ (1799-1876), որուն «Բուրաստանքը» կը համարուի դասական բանաստեղծի լուրջ արտադրութիւն:

Վենետիկի եւ Վիեննայի մէջ դասական շարժումին մեծապէս նպաստեցին հոյլ մը միաբաններ, որոնց ինքնագիր եւ թարգմանածոյ գործերը յղկեցին ժողովուրդին ճաշակը եւ պատրաստեցին աշխարհաբար լեզուի յայտնութիւնը, որուն ոտնաձայնը կը լսուէր արդէն զոյգ վանքերուն մէջ:



6. ԱՇԽԱՐՀԱՔԱՐ ԼԵՃՈՒԻ ԵՐԵՒՈՒՄԸ

Աշխարհաբարի գիտական առաջին ուսումնասիրութիւնը կը կատարէ ինքը՝ Մխիթար Վրդ. «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» (1727), եւ «Գիրք քրիստոնեական վարդապետութեան շարադրեցեալ աշխարհաբարիւ լեզուաւ» (1727) գործերով:

Անկէ ետք աշխարհաբարի մեծագոյն ջատագովն ու կերտողը կը հանդիսանայ Զ. Ղուկաս Ինճիճեան, որ 1799-էն սկսեալ աշխարհաբար լեզուով կը հրատարակէ ամսվերջեան հատոր մը «Տարեգրութիւնք» տիտղոսով, ուր ամփոփուած կը գտնենք անցնող տարուան քաղաքական, ընկերային բոլոր կարեւոր դէպքերը: Վիեննայի մէջ Գերպ. Արսէն Այտընեանի լոյս ընծայած «Քննական քերականութիւն» ընդարձակ աշխատանքը (1866) աշխարհաբարի լաւագոյն յուշարձանը կարելի է նկատել:

7. ԶԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Արդի ըմբռնումով թատերական կտորի մը հանդիպելու համար հարկ է սպասել մինչեւ 1753 ձեռագրի մը նախափորձը՝ խնամքով պահուած Ս. Ղազարի դիւանին մէջ:

Նոյն դիւանը ունի գրաւոր վկայութիւններ 1724 թուականով, թատերական ներկայացումներու Ս. Ղազարի մէջ: Անկէ ետք, բազմաթիւ նոր թատերգութիւններ գրուած եւ ներկայացուած են վանաբնակ վարդապետներէն եւ աշակերտներէն, կրօնա-բարոյական եւ յատկապէս հայրենասիրական բովանդակութեամբ:

Թատրոնը Ս. Ղազարէն Պոլիս փոխադրողը կ'ըլլայ Զ. Մինաս Բժշկեան, ապա Զ. Պետրոս Մինասեան, որուն աշակերտները Մուրատ-Ռափայելեան վարժարանէն (Վենետիկ) շրջանաւարտ, կրնար նկատուիլ իսկական հիմնադիրները թատերական կազմակերպուած գործունեութեան: Ասոնցմէ են Մկրտիչ Պէշիկթաշեան, Սրապիոն Զեքիմեան, Թովմաս Թերգեան, Նարայէ, Էմմանուէլ Եսայեան, Սրապիոն Թղլեան, Մկրտիչ Աճեմեան, եւայլն:

8. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹԻՒՆ

Մխիթարեանները իրենց գործը կատարած են ոչ միայն իրենց հրատարակած գիրքերով, այլ նաեւ իրենց հասցուցած աշակերտներով:

1746-ին Թրանսիլվանիոյ Պաշպալով հայկական գաղութին մէջ, հիմը կը դրուի առաջին Մխիթարեան վարժարանին, երբ տակաւին Զիմնադիրը ողջ էր:

Մխիթարեան վարժարաններու ցանցը հետզհետէ կը տարածուի քիչ մը ամէն կողմ ուր պատմութիւնը եւ քաղաքական անցուդարձերը կը ցրուեն հայ ժողովուրդը: Ասոնց երկարակեցութիւնը պայմանաւորուած կը մնայ նոյն գաղութի կեանքէն եւ պայմաններէն:

Պաշպալովի առաջին կրթական հաստատութիւնէն մինչեւ Զալէպի վերջին (1936) վարժարանը, Մխիթարեան Միաբանութիւնը ունեցած է 154 վարժարաններ, որոնք մեծ ներդրում ունեցած են հայ վերածնունդի եւ ռումանօք շարժումի անդաստաններէն ներս:



9. ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐՏԻՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայերէն լեզուով առաջին քարտեղը պատրաստուած է 1695 թուականին Ամստերդամի մէջ, Թովմաս Վանանդեցիի խնամքով, պղինձի վրայ փորագրուած, Ադրիանուս եւ Պետրոս Սքոնթեկ եղբայրներու կողմէ:

Մխիթար Երկու միաբաններու՝ Հ. Իգնատիոսի եւ Հ. Չաքարիայի կը թելադրէ մասնագիտանալ փորագրութեան արուեստին եւ այսպէս նոր էջ մը կը բացուի հայ արուեստի պատմութեան մէջ: Ս. Ղազարի պղնձափորագրութեան արուեստին լաւագոյն ներկայացուցիչը կը դառնայ Հ. Եղիա Էնտագեան, որուն պատրաստած փորագրութիւնները եւ Հայաստանի քարտէսները կրնային մրցիլ Վենետիկի մեծ վարպետներուն հետ:

10. ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ (ՃԵՄԱՐԱՆԸ)

Հիմը դրուած է 8 Սեպտ. 1700-ին, եւ այդ օրէն սկիզբ կ'առնէ ազգայնական աշխատանք մը, ծրագրուած եւ գործադրուած կաճառական լրջութեամբ, ինչպէս ցոյց կու տան վերը նշուած ինը կէտերը:

Սակայն, 17 Օգոստոս, 1810-ին Նափոլէոն Ա.-ի կայսերական հրովարտակով, Ս. Ղազարի Մայրավանքը պաշտօնապէս կը դառնայ Academia Armena Sancti Lazari, այսինքն՝ «Հայկական Ազգայնական Սրբոյն Ղազարու»:

Իրաւական հաստատութիւն դարձած Մխիթարեան Ազգայնական շուտով կ'ունենայ նաեւ իր Կանոնագիրքը եւ իր «Բազմավէպ» պաշտօնաթերթը, որ հնագոյններէն մին կը համարուի:

(Շարունակելի)

Յարութիւն Վրդտ. Պզտիկեան

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ամեն մեկ հայ անհատապես անչափ տաղանդաւոր է, բանիմաց, բազում կարողութիւններով օժտուած, բայց ինչպէ՞ս է որ նոյն այդ հայը միւս հայուն հետ չի համագործակցի ընդհանրապէս, չընդունիր անոր արժանիքները, հոգեմտաւոր թէ այլ ընդունակութիւնները, չընդունիր իր ես-էն բան մը գիշիլ յանուն հաւաքականին, յանուն ընդհանրականին, կը պնդէ ի՛րը, իրենի՛նը, եւ կը բռնուցնուի միայն ծայրայեղ պարագային, երբ մահու կենաց սահմանին վրայ է...իսկ այդ սահմանը երեւոյթ թէ աներեւոյթ կայ ներկայիս ալ եւ գրեթէ բոլոր ժամանակներուն:

.....

Բնութեան հրաշքները տրուած են բոլորին հաւասարապէս եւ անվճար...կը մնայ գնահատել ու արժեւորել մէն մի ծաղիկն ու ծառը, թուփն ու տերեւը, երկինքն ու աստղերը...բնութեան մէջ կատարուած փոքրիկ մէկ պտոյտը այնքան անդորրաւետ է հոգւոյն համար...նաեւ ներշնչող, միտք ու սիրտ լիացնող... կարելի՞ է արդեօք ըսել, որ կեանքի ճշմարիտ վայելքները ձրիաբար պարգեւուած են բոլորին...անոնց մէջ է բուն երջանկութիւնը...

.....

Երանի՛ այնքան զօրաւոր ըլլայինք որ մեր արժեհամակարգը օրինակ ըլլար այլոց, մեր մշակոյթի ստեղծած գանձերը ներշնչարան դառնային իրենց համար, մեր ուրոյն նկարագիրը, աշխարհագրացողութիւնը, ապրելակերպը ոգեշնչէին ուրիշները....տակաւին մեր Մեծասքանչ լեզուն բաղձային սորվիլ, անով կարդալ փափաքէին Մեծն Նարեկացիի մատենանը եւ այլ մեծերու ստեղծագործութիւնները....: Արդեօ՞ք անիրագործելի երազ է սա...Բնա՛ւ երբեք: Տասներորդ դարուն, երբ մենք կառուցեր էինք հազարազմբէթ հիասքանչ ոստանը՝ Անին, ունէինք մատենագրութիւն, Նարեկացի....անգլիացիները «ծառերու վրայ էին», ինչպէս պիտի ըսեր Christopher Walker, Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատմական բեմէն...: Կրնա՞նք մեր դարաւոր մեծութիւնը ետ բերել...Սա պիտի ըլլայ մեր մարտահրաւերը....եւ կրնանք, եթէ մեր ամբողջ անհատական-ազգային հոգեմտաւոր ներուժը, ոգիի տքնանքը ուղղենք այդ սրբազան նպատակին եւ ի կատար ածենք մեր առաքելութիւնը...

.....



Ինչպէ՞ս կրնաք լռեցնել ձայնն արդարութեան ու ճշմարտութեան, որ արեւին ճառագայթներուն նման անպայմանօրէն պիտի ճեղքէ սուտերու խաւարը եւ ճաճանչափայլ շողարձակէ իր լոյսը՝ ուզէք թէ չուզէք...բնութեան եւ տիեզերքի անխախտ օրինաչափութեամբ:

.....

Ճակատագրական պահեր կան՝ «Այո» կամ «Ոչ» ըսելու, վճռականութիւն եւ կեցուածք ցուցաբերելու, առանց որեւէ յետին հաշիւի, զուտ արդարութեան եւ ճշմարտութեան սիրոյն, որոնցմէ կախեալ է ազատ ու արժանապատիւ կեանքը՝ անհատական թէ ազգային-հաւաքական մակարդակներու վրայ ալ...Սա սահմանագիծ է, ուր շատ-շատեր կ'ընկրկին, չեն ուզեր «գէշ» մարդ դառնալ, վնասել իրենց դիրքին, պաշտօնին...եւ կը կենան լուռ, կը սպասեն...մինչեւ որ ջուրերը հանդարտին...յետոյ կը ճառեն լորձնաշուրթն եւ ամպագորգոռ հայրենասիրութեան մասին:

.....

Ճշմարիտ գրողը արարչական կայծը կը կրէ իր մէջ եւ իր գրիչը ի գործ կը դնէ լուսաւորելու համար մարդկային կեանքը՝ ճշմարիտին, ազնիւին ու գեղեցիկին լոյսով...Գրելը ինքնանպատակ չէ երբեք, այլ ստեղծագործ միջոց՝ բարեփոխելու մարդ էակին, ազգին ու մարդկութեան կեանքը, զայն դարձնելու առաւել մարդկայնական ու ԱստուածամերձԲարոյական-հասարակական մեծ բեռ է դրուած յատկապէս գրողին վրայ....Գրելը կոչում ու առաքելութիւն է եապէս:

.....

Մենք ընդհանրապէս կ'ուզենք տեսնել միայն ա՛յն ինչ կ'ուզենք տեսնել...լսել միայն ա՛յն ինչ կ'ուզենք լսել...եւ մեր աչքերն ու ականջները փակ պահել ա՛յն իրականութեան, որ ձեռնտու չէ մեզի...Սա կը կոչուի նաեւ ջայլամի վարքագիծ կամ քաղաքականութիւն:

.....

Ներկայ աշխարհի խառնիճաղանճին ու թոհուբոհին մէջ, ճշմարտութիւնը յայտնաբերելը, կեանքի մեծագոյն մարտահրաւերներէն մէկն է, եթէ ոչ՝ գերագոյնը....Անիկա այնքան թաքնուած կը մնայ բազմաբնոյթ դիմակներու ետին, կեղծ ու խաբեպատիր խօսքերու եւ շպարներու տակ, մարդկային շահամետ եւ հաշուենկատ փոխարաբերութիւններու ներքոյ....Պիտի շարունակ պեղել զայն, փնտռել զայն անխոնջ եւ մշտաբար, առանց խաբելու ինքզինք, առանց օրօրուելու գեղեցիկ պատրանքներու խաբուսիկ հրապոյրէն, շեշտակի նայիլ անոր աչքերուն՝ քաջաբար, քանզի առանց ճշմարտութեան յայտնաբերումին, կարելի՞ է երբեւէ հասնիլ խորունկ ինքնաճանաչման եւ մարդաճանաչման....կարելի՞ է ազատագրուիլ...

.....

Շատ դիւրին է կառչիլ գաղափարէ մը, զայն կրկնել ու կրկնել, ինքնախաբկանքով մը, չանդգնիլ նորը փնտռելու դժուար աշխատանքին, մինչեւ զգաս որ գլուխդ պատին տուած ես...Մենք հարկադրուած ենք ամէն օր վերաքննելու մենք զմեզ, մեր ուզածն ու չուզածը,



ըրածն ու չըրածը, հաւատացածն ու չհաւատացածը...ինքնակատարելագործման ճանապարհին վրայ, որ աւարտ չունի երբեք...

.....

Օտարէն եկած գաղափարը, գաղափարները հիացումով եւ շատ անգամ կուրօրէն կ'որդեգրենք, կը պանծացնենք, առանց նոյնիսկ հարց տալու թէ արդեօք այդ գաղափարը ի՞նչ նպատակի կը ծառայէ, ի՞նչ է անոր միտք բանին...Մինչ հայէն եկած գաղափարը կամ գաղափարները վերապահութեամբ կ'ընդունինք կամ կը մերժենք, քանզի մէկ հայը միւսէն միշտ ալ «աւելի խելացի» է...եւ այսպէս կոյր օտարամիտութեամբ կը կլլենք շատ անգամ այն օտարամիտ, շատ անգամ կեղծ ու շինծու գաղափարները, որոնք նոյնինքն մեզ մոլորեցնելու, մեզ քայքայելու եւ կործանելու կը ծառայեն...

.....

....Յանդուգն, արդարակորով եւ էապէս հայրենասէր ու ժողովրդանուէր անձն է որ կը վտանգէ իր սեփական նեղ շահերը եւ կը պայքարի յանուն համայնական շահերուն եւ խնդիրներուն....կը պայքարի յանուն արդարութեան ընդդէմ անարդարին ու անարդարութեան...յանուն ազատութեան ընդդէմ բռնակալին եւ ստրկութեան....Նման ազգային-բարոյական ՈՐԱԿՆ է որ անհրաժեշտ է մեզի՝ օդի, ջուրի, հացի նման....

.....

Մեր մեծաքանչ լեզուին՝ ՀԱՅԵՐԷՆԻՆ մէջ են արտացոլուած ազգային մեր հոգեբանութիւնն ու մտածելակերպը, ազգային նկարագիրն ու ինքնութիւնը....Անիկա ե՛ւ պատմութիւն է, ե՛ւ մշակոյթ, ե՛ւ ինքնութիւն...հայ հոգիին ու ոգիին մարմնացումը: Առանց հայոց լեզուին, մենք որոշապէս կը մեռնինք որպէս ազգային ինքնութիւն դիմագիծ ունեցող ժողովուրդ եւ կը դառնանք անդէմ, անդիմագիծ զանգուած....Ի զուր չէ ըսուած. «Լեզուն ազգի մը հոգին է, կենդանի է այդ հոգին, կենդանի է եւ ազգը, կը մեռնի լեզուն, կը մեռնի եւ ազգը...»...Պահենք-պահպանենք եւ առաւել պայծառացնենք զայն...քանզի առանց հայոց լեզուի կենսունակ պահպանման, չի կրնար ըլլալ ազգային պետականութիւն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Յաւերժութեան մատեանին մէջ
Օրերը՝ սոսկ ակնթարթներ
Բայց յաւերժն ալ ինքզինք ճանչնայ
Երբ դիտէ լուռ ակնթարթներն..

.....

Ճշմարտութեան լեղի բաժակն
Քաղցրահամ էր ինծի համար
Խմեցի ես յար հանապազ
Ազատութեան բագինին վրայ...

.....

Սուտի աշխարհ է, սուտը ի պատուի
Սուտը յարգուի, սուտին տեղ տրուի
Սուտին պաշտօն տան, աթոռ, բարձր դիրք
Սուտին աչք գոցեն, արդարն պատժուի...

.....

Լաւ է մենկիլ քան ստրուկ ապրիլ
Տերը չըլլալ ճակատագրիդ
Ուրիշներ զայն տնօրինեն
Ամեն վայրկեան կեանքդ խլեն...



.....

Գիշերը կ'իջնէ դանդաղ ու խաղաղ
Իր մութ սաւանով ծածկէ ամենուր
Բայց հուրքը սրտին դեռ կը բոցկտայ
Փարոս կը դառնայ գիշերուան մէջ մութ...

.....

Թէ օրը գայ իմ մեկնումիս
Հանգիստ խիղճով կ'ուզեմ մեկնիլ
Թէ Աստուծոյ ինձ շնորհածն
Ընծայեցի կրցածիս չափ...

.....

Խիղճիդ միայն հաշիւ պիտ' տաս
Ըրած-չըրած գործիդ համար
Մնացեալը փուճ է, պատրանք
Այսօր գովեն, վաղն ուրանան...

.....

Պռոպանէն գործ մի սպասեր
Լուրջ գործը միշտ անադմուկ է
Պարապ տակառն շատ ձայն հանէ
Լեցունը միշտ ալ անձայն է...

.....

Երջանկութիւնս գտած տողս է
Անհուն բերկրանքս՝ բառս ոսկեղնիկ
Քովէ քով շարուած երկնած գիրս է
Ուր մաքուր ցոլան յոյգերս յուշիկ...

.....

Թէ սպասումիդ չարձագանգեն
Մի աղաչեր, մի ստորնանար



Ինքնաբեր եմ սեր ու յարգանք
Կամ կան անոնք, կամ ալ չկան..

.....

Անապատին մէջ անջրդի
Չիս հոտեւան ծաղիկ մ'ըրի
Բայց զլացար շիթ մը գորով
Տալ ծաղիկին այդ հոգեթով...

.....

Գովեստով փունճ մի՛ հրճուիր
Ան կայ այսօր, վաղը չկայ
Յրճուանքն իրաւ լոկ ներքին է
Թէ հաշտ ըլլան սիրտդ, հոգիդ...
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ